ՀԵՏԵԼԱԿԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՆ

ԳԼՈՒԽ II

ՋՈԿԻ ՈՒ ՆՐԱ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

356
Հ-55

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄԱՎՐԱՏԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

356
Հ-55

01 MAR 2018

ՀԵՏԵՎԱԿԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՆ

ԳԼՈՒԽ II

ՋՈԿԻ ՈՒ ՆՐԱ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

3605 Հ5 37

ՊԵՏՀՐԱՏ ՌԱԶՄԱՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ ★ 1933

ՊԵՏ. ՀԱՆՐԱՊԵՏ. Гос. Публ. Библ.
ՀԱԽՍՀ—ССРА
им. А. Масикяна

42.406

11 JUN 2013

Գատ. խմբագիր Հ. Ալեքյան. Թարգմ. Գրաբիոս.
Տեխ. խմբագիր Գ. Զեն. ան. Հրատարակ. № 2690
Գլավլիտ 8255 (բ). Գտավեր 1843. Տպրաժ 3000
Գնտրատի տպարան. Հանձնված է արտադրության 8 ոգոստոսի 1933. Ստորագրված է տպագրելու 9 հոկտեմբերի 1933.

ՋՈԿԻ ՈՒ ՆՐԱ ՀՐԱՄԱՏԱՐԻ ՊԱՏԻ ԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

ԽՆԴԻՐ ԱՌԱՋԻՆ

Նախ քան խնդրի մշակումը հրամատարները պետք է կրկնեն հետևակի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 843-848, 665, 305, 307 հոդվածները. հետևակի մարտական կանոնադրքի 1-ին մասի համապատասխան հոդվածները. Կարմիր բանակայինի մարտական ծառայության (կմծ) 7-21 հոդվածները. «Կարմիր բանակի ռազմաքիմիական պատրաստության կազմակերպումն ու մեթոդիկան» (ԿՔԿՄ) 2, 4 և 13 հրահանգները և «հակաքիմիական պաշտպանության հրահանգի» համապատասխան հոդվածները:

ԳՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը.—1) *Ստուգել Ջոկի հրամանատարին— թե ինչ չափով է նա կարողանում*

ա) շարումների ու շարաժխուԹյունների ստույգ հրամաններ տալ յերԹի ու մարտակարգերի համար դետքում, նկատել ու վերացնել Կարմիր բանակայինների Թույլ տված սխալները.

ը) պահել դետքին ցույց տված ուղղությունն առանց ճանապարհների շարժման ժամանակ.

գ) կապ պահել յերթական ուղեկալի հետ.

դ) ողային տաղնապի ազդանշան տալ և ձեռք առնել ինքնապաշտպանության միջոցառումներ ավիոքիմիական հարձակման դեպքում:

ե) տանկային վտանգի ազդանշան տալ և միջոցներ ձեռք առնել կռվելու համար հակառակորդի հետախուզական տանկերի ու զրահամեքենաների դեմ.

զ) հեծելազորի հարձակման վտանգի ազդանշան տալ և կռվել հակառակորդի հետախուզության հարձակումների դեմ.

ը) գործել վարակված տեղամասի հայտաբերման դեպքում.

2) ստուգել, թե հրամանատարն ինչ չափով գիտե հետևակի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 847 հոդվածները, հետևակի մարտական կանոնադրքի 1-ին մասի համապատասխան հոդվածները. Կարմիր բանակայինի մարտական ծառայության (ԿՄԾ) 8, 10, 12, 14, 15 18, 20 հոդվածները:

Կատարման կարգը.—Ստուգումը կատարվում է դաշտային պարապմունքի ձևով, ջոկը կատարում է դետքի խնդիրը յերթական պահպանության մեջ, յերբ կա յերթական ուղեկալի նշված կորիզ ազդանշանային պոստով, և ղեկավարը տալիս է միջանկյալ խնդիրներ ավիոքիմհարձակման, հեծելազորի, տանկերի

հարձակման մասին, ըստ վորում առաջավոր մեքենան նշվում է արագ շարժվող մակեթով. իսկ հեծելազորին՝ առաջավոր ձիավորով:

Գնահատականը. «գերազանց», յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ Կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 2 տուգանային աչկո.

«Լավ», յերբ հրամատարը վստահորեն կատարում է բոլոր պահանջները, ստանալով հրամանատար դեկավարից վոչ ավելի, քան 2 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի քան 4 տուգանային աչկո:

«Բավարար», յերբ հրամատարը ստանում է վոչ ավելի քան 3 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի քան 5 տուգանային աչկո:

ԾԱՆՈԹՈՒԹ.— Ստուգումն ու կանոնադրքերի հոդվածների գիտելիքների գնահատականը կատարվում են համաձայն ընդհանուր ցուցումների 16-րդ ու 24-րդ հոդվածների, ըստ վորում քննական վարժության մեջ մատնանշած հոդվածների դերազանց իմանալը մի աստիճանով բարձրացնում է, իսկ անբավարար իմանալը մի աստիճանով իջեցնում է ընդհանուր գնահատականը: Այս ծանոթությունը տարածվում է ջոկի համար բոլոր հետագա խնդիրների վրա, մինչև 12-րդ խնդիրը ներառյալ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1–ա (ա)· ջոկի ու նրա հրամատարի կողմից՝ յերքի համար շարքերի ու դետոնում ջոկի շարժման համար կարգերի յուրացումը:

Վարժության նպատակն է·—*Հրամատարի համար՝ ջոկի շարքերի ու կարգերի ուսումնասիրություն յերթում և պահպանության մեջ, և ջոկի համար՝ մարզանք շարումների ու շարափոխումների ստույգ կատարման մեջ՝ հրամատարի համապատասխան հրամաններ տալու հետ միասին:*

Վարժությունը մշակվում է նորակոչիկների զորամաս գալու առաջին իսկ որերից և ամրացվում է ամբողջ տարվա ընթացքում:

1–բ (բ) սովորքների մշակում ջոկի հրամատարի կարմիր բանակայինների մեջ աշխատանքի վերաբերյալ, յերբ ջոկը, վորպես դետոնատոր գտնվում է պահպանության մեջ յերթում (ԿՄԾ 16, 17, 18,—20 հոդվածներ)·

Հատուկ ուշադրություն է նվիրվում կապին և ոդային ու տանկային վտանգի մասին նախազգուշացման ծառայությանը:

Վարժությունը նպատակ ունի սովորեցնել ջոկի հրամատարին և ամբողջ ջոկին պահել շարժման ուղղությունն ու տեմպը, յերբ շարժվում են առանց ճանապարհի և միաժամանակ զննել տեղանքը, պահպանել տեղական կապ յերթական ուղեկալի հետ և ոգտվել ամենապարզ հրամանների ու ղեկուցագրերի ընդունելու ու փոխանցելու համար լուսազդանշանային ու հնչունական նշանակությունից ու պայմանական նշաններից, արագ փոխանցել պահպանվող զորքերին ոդային ու տանկային տաղնապի ազդանշանները, յերբ հայտաբերվում են հակառակորդի սավառնակներն ու տանկերը:

Վարժությունը մշակվում է թռուցիկ փոքրիկ խնդիրների լուծման ձևով, վոր լուծում են իրենք հրամատարները և ամբողջ ջոկի կազմով ազդանշաններ տալու և ընդունելու մարզանքով:

1–գ (վ) Սովորքների մշակում ավիաֆիմհարձակման դեպքում ջոկի գործողության մեջ (ԿՄԾ հոդված 15–րդ)·

ՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է·— *ամրացնել ջոկի սովորքները առաջավոր (կողքի) յերթական ուղեկալին ազդանշան փոխանցելու մեջ սավառնակի հայտնվելու մասին, մատնանշելով նրանց թռիչքի ուղղությունը, թշնամու սավառնակը վորոշելու յեղանակների մեջ (ԿՄԾ հոդ 59–րդ), քողարկման և ռումբերի բեկորներից պաշտպանվելու համար միջոցներ ձեռք առնելու մեջ, այն դեպքում, յերբ սավառնակները ռումբեր կնետեն և կգնդակոծեն գնդացրերով (ԿՄԾ հոդ· 15–րդ) և պաշտպանության միջոցների ոգտագործման մեջ՝ ավիաքիմ հարձակման դեպքում:*

1–դ (գ) Սովորքների մշակում հակառակորդի զրահամասերի հայտնվելու մասին զորքերին ազդանշաններով նախազգուշացնելու և տանկերի դեմ պաշտպանության միջոցներ ձեռք առնելու մեջ

Վարժության նպատակն է՝ յուրացնել ազդանշանային հրթիռների ոգտագործումը և ճարտարություն ձեռք բերել ջոկին պաշտպանելու համար՝ նրա դեմ տանկերի հարձակման դեպքում:

Վարժությունը մշակվում է թռուցիկ փոքրիկ խնդիրների լուծման ձևով, նշելով տանկերը (թեկուզ մեկ արագընթաց մակերթով, վորը նշում է հակառակորդի առաջավոր տանկը):

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ժամանակին տանկային տագնապի ազդանշան տալու և տանկերից պաշտպանվելու ու քողարկվելու համար տեղանքն ոգտագործելու վրա:

1–ե (դ) Սովորքների մշակում հեծելազորի դեմ ջոկի կռվի համար (ԿՄԾ հոդվ. 15–րդ)

Գտնվելով դետքում, ջոկը կարող է յենթարկվել հակառակորդի հեծյալ հետախուզության հանկարծակի հարձակմանը՝ դերի դրավելու նպատակով և կարող է հանդիպել հակառակորդի խոշոր ուժերին, վորոնք կձգտեն զրոհել պահպանվող զորքերին: Առաջին դեպքում ջոկը, հարմարվելով տեղանքին, դիպուկ կրակով վոչնչացնում է հեծյալ հետախուզությանը, իսկ յերկրորդ դեպքում տագնապի ազդանշան է տալիս և միաժամանակ կրակ է բացում հեծելազորի և մասսայի դեմ, ոգտագործելով պաշտպանության համար այնպիսի տեղական առարկաներ, վորոնք անմատչելի յեն ձիու համար:

Վարժությունը մշակվում է դաշտում, նշելով հեծելազորն առաջավոր ձիավորով, իսկ իր զորքերին նշելով կապի պոստով:

Վարժությունը կատարված է համարում յերբ կապի պետն ընդունում է տագնապի ազդանշանն ավելի շուտ, քան հեծելազորը կկարողանա հեռանալ դիրքից, անցնելով արշավով 500–700 մետրից ավելի:

1–զ (ե) Սովորքների մշակում զանազան հեռավորությունների հաղթահարման մեջ

Յուրաքանչյուր կարմիր բանակային պետք է պատրաստ լինի մի որագնաց հեռավորությամբ յերթ կատարելու՝ լրիվ մարտական հանդերձանքով, առանց իջեցնելու մինչև որագնացի վերջն իր մարտունակությունը:

Այս նպատակին կարելի յե հասնել մի կողմից՝ ձեռք բերելով շարժման տեխնիկայի ճիշտ ճարտարություններ, պահպանելով ուժերի խնայելու միջոցառումները (ԿՄԾ 10 դ հոդված) և մյուս կողմից՝ մարդանքի զո-

յությամբ, վորը բարձրացնում է ֆիզիկական ուժերն ու դիմացկանությունը:

Նախ քան մարզանքը պետք է սովորել քայլի տեխնիկան (քայլի յերկարությունը, քայլի տեմպը) և նրա կախումը գետնից, ռելյեֆից, շնչառությունից ու վոտքի թաթը դնելուց: Հետագայում տեղի յի ունենում այդ սովորքների ամրացման մարզանքը, խստիվ պահպանելով այդ յուրաքանչյուր խմբի ամեն տեսակ տեղաշարժումների ժամանակ:

Արդյունքների ստուգումը ծառայում է վոչ թե յերկար տարածությամբ յերթը, այլ կարճ տարածությամբ (3–5 կլմ.) շարժումը, բայց անպայման պահպանելով յերթի բոլոր պահանջները:

Սկզբում՝ յերթն անց է կացվում պահակային կարգով, իսկ հետոհետե աշխատանքի արդյունքների բարձրացման հետ՝ բարձրանում են մարզանքի պայմանները—բարձրացնելով հանդերձանքի քաշը (մարտական հանդերձանք): Զուգընթացաբար տարվում է մարզանք հակագազի ոգտագործման մեջ և մաշկը (կաշին) պաշտանելու միջոցների արագ գործադրության մեջ:

1–ր(ժ) Սովորքների մշակում վարակված տեղամասերի դեմ պայքարելու մեջ

Գտնվելով դեռքում, ջոկը կարող է ուժեղացվել քիմիական հետախույզներով: Վարակված տեղամասի հանդիպելիս ջոկի հրամանատարը պետք է ճիշտ խնդիր առաջադրի քիմիկներին, իսկ իր գործողություններով ապահովի քիմիկների կողմից քիմհետախուզության կատարման հնարավորությունը: Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում նրանից հետո, յերբ ամբողջ ջոկը կվարժվի փոխանցել և ընդունել վարակված տեղամասի հանդիպման մասին ազդանշանները և արագ կհաղթահարի վարակված տեղամասը, իսկ ջոկի հրամանատարը բավականաչափ պրակտիկա կստանա քիմիկների հետ աշխատանքի մեջ: Տվյալ վարժությանն անհրաժեշտ է ամենապակասը 2–3 անգամ մասնակից դարձնել քիմպետերին՝ դնդի քիմդասակի կազմից (ցուցադրական վարժություն):

ԽՆԴԻՐ ՅԵՐԿՐՈՐԴ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նախ քան խնդրի մշակումը և խնդրի մշակման հետ զուգընթաց ուսումնասիրվում են հետևյալի մարտական կանոնագրքի 2–րդ մասի 97–103, 167–169, 182–183, 196–203 հոդվածները. ԿՄԾ 1–6, 22–25 հոդվածները և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգի» համապատասխան հոդվածները:

ԴՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը.—1) ստուգել, թե ջոկի հրամանատարը ինչ չափով է կարողանում.—

ա) Ճշտել ջոկի դասավորության տեղը պաշտպանության մեջ, հաշվի առնելով տեսածքի ու դնդակոծի, քողարկման և ծածկված մատույցի դոյությունը, առկևում հակառակորդի հասար ծածկված մատույցների ու նրա կողմից լավ դիտողության բացակայությունը.

բ) Կազմել հրաձգային քարը.

գ) Ընտրել պահունի այնպիսի դիրքի տեղ, որն ապահովում է ստացած խնդրի լուծումն այն դեպքում, երբ անհրաժեշտ կլինի այդ դիրքն անցնել՝ հիմնական դիրքը կայուն թունավոր նյութերով ռմբակոծման պատճառով.

դ) Ընտրել դիրք գիշերվա համար.

ե) Կազմակերպել հակաքիմիական պաշտպանություն.

զ) Կազմակերպել հակատանկային պաշտպանություն:

2) Ստուգել, թե ջոկի հրամանատարն ինչ չափով գիտե հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասի 100–102, 168, 169 199, 200, 202 հոդվածները:

Կատարման կարգը. ստուգումը կատարվում է տեղանքում պարապմունքների ձևով, որոնք ընդդրում են ջոկ հրամանատարի՝ այն խնդրի լուծման աշխատանքը, որն առաջադրում է դասակի հրամատարը պաշտպանության վերաբերյալ, մշակելով լուծման ընթացքում քննական վարժության բոլոր հարցերը և փաստորեն կատարելով բոլոր աշխատանքները թե՛ ջոկի հրամանատարի և թե ամբողջ ջոկի կողմից:

Գնահատականը.— «գերազանց», երբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 2 տուգանային աչկո:

«Լավ», երբ հրամատարը վստահորեն կատարում է պահանջները, ստանալով հրամատար—դեկավարից վոչ ավելի, քան 2 ուղղում, իսկ կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի քան 4 տուգանային աչկո:

«Բավարար», երբ հրամատարը ստանում է վոչ ավելի քան 3 ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի քան 5 տուգանային աչկո:

Սխալներ, որոնք խանգարում են քննական վարժության և ամբողջ խնդրի կատարմանը.—

ա) Դասակի հրամանատարը փոխանակ գերազանցորեն պատրաստելու ջոկերի հրամատարներին, ղեկավոր ուշադրությունը դարձնում է ամբողջ ջոկի վարժությունների քանակի ավելացման վրա, այսինքն՝ մարզեցնում է ջոկին մի վորոշ պարագայում:

բ) Պատշաճ ուշադրություն չի նվիրվում կարմիր բանակայինների աշխատանքներին՝ ստորաբաժանման կազմով պարապմունքի անցկացման պրոցեսում, և առանձին կարմիր բանակայիններն անվուլթ գտնվելով իրենց պար

տականությունների կատարման մեջ, ավելացնում են տուգանային աշկոների թիվը, որոնք անբավարար գնահատական են առաջացնում ամբողջությամբ վերցրած ջոկի համար։

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2–ա (ա)։ ջոկի հրամանատարի սովորքների մշակում պաշտպանության համար ջոկին մատնանշած տեղի գնահատականի մեջ

Վարժության նպատակն է։— սովորեցնել հրամատարին արագ կողմորոշվել տեղանքում, գնահատել այն, թե ինչ չափով է նա բավարարում պաշտպանության մեջ դասավորության հիմնական պահանջներին, այն է «տեսնել թշնամուն, իսկ ինքը մնալ անտեսանելի», «հարվածել թշնամուն կրակով, իսկ ինքը առավելագույն չափով ծածկված մնալ հակառակորդի կրակից»։

Միայն յուրացնելով այս վարժությունը, ջոկի հրամանատարը կկարողանա ինքնուրույն ճշտել ձեռքի գնդացրի ու հրաձիգների դասավարությունը տեղանքում այնպես, որ առավելագույն կորուստներ պատճառելով հակառակորդին, պահպանի իր ջոկին անտեղի կորուստներից։

Վարժությունը մշակվում է տեղանքում հրամատարական խմբակային պարապմունքի ձևով։ Վարժության սկզբի համար հրամատար—ղեկավարն ինքն է գնահատում ընտրած

տեղանքը, հատուկ ուշադրություն դարձնելով այն տեղերի վրա, որոնք ծածկված են հակառակորդի կողմից տեսածրից, թիկունք տանող մատույցների վրա, դեպի հակառակորդի կողմը դիտելու հարմարության վրա և այն կարող է ոգտագործել ջոկին մոտենալու համար։ Այնուհետև ղեկավարը ցույց է տալիս սովորողներին, թե ինչպես կարելի է տվյալ տեղանքում դասավորել և՛ գնդացիրը և՛ հրաձիգներին այնպես, որ նրանք կարողանան գնդակոծել հակառակորդի թևը, երբ նա հարձակվում է հարևան ջոկի վրա, իսկ իրենք ծածկված մնան հողի հաստ շերտով՝ ուղղակի ջոկի վրա հարձակվող հակառակորդի կրակից։

Ցուցադրանքն ավարտվում է պահունի տեղերի ընտրությամբ գնդացրի ու հրաձիգների համար, այն դեպքի համար, երբ անհրաժեշտ կլինի կրակը տեղափոխել այլ ուղղությամբ։

Ցուցադրանքից հետո ղեկավարը փոխում է պարագան և պահանջում է սովորողներից նույնպես գնահատել տեղանքը։

Վարժությունը ավարտվում է հակառակորդի կողմից տեղանքի գննությամբ այնպես, որ յուրաքանչյուր ջոկի հրամատար անձամբ համոզվի թևահար դիրքերի առավելությունների մեջ։

2–բ(բ). Պրակտիկա ջոկի համար խրամատի ու ապաստարանի ծրագծման և կառուցման մեջ, յերբ դիրքն ամբացված է վաղորոք

Վարժության նպատակն է.— ջոկի հրամատարի և ամբողջ ջոկի կողմից տեղանքում մշակել «ճարտարագիտական հրահանգի» անհրաժեշտ հոդվածները, նպատակ ունենալով սովորքներ ձեռք բերել խրամատների ծրագրման, խրամատների և շարափակոցների կառուցման աշխատանքների ղեկավարության մեջ:

Նախքան տեղանքում պարապմունքն անցկացնելը նույնպիսի պարապմունք պետք է անցկացնել ավազոտ արկղի վրա:

2–գ(վ). Սովորքների մշակում ջոկի հրամատարի և ամբողջ ջոկի կողմից՝ հակառակորդի աչքի առաջ կրակային կետ գրավելու ամրացնելու մեջ:

Պարապմունքների նպատակն է՝ սովորեցնել, ջոկի հրամատարին ճշտել իր ջոկի դասավորության այն տեղը, որ ցույց է տվել նրան դասակի հրամատարը և՝ այնուհետև դրավել ընտրած դիրքը և խրամատներ կառուցել, առանց դրավելու հակառակորդի ուշադրությունը:

Այս պարապմունքն ողտակար է անցկացնել յերկկողմ վարժության ձևով, վորտեղ ծածկարաններում դասավորված յերկու ջոկին

միմյանցից մոտ 600 մետրի վրա, խնդիրը է տրվում դրավել պաշտպանության համար այն պիսի դիրքեր, վորոնք հնարավորություն են տալիս գնդակոծելու իր հակառակորդին:

Ջոկերից յուրաքանչյուրը ծածկված դուրս է սողում իր տեղը և սկսում է ինքնախրամատացման աշխատանքը, և դիտելով իր հակառակորդի սխալներն, ինքն է սովորում վերացնել այդ սխալները:

Յուրաքանչյուր ջոկ ունի սեմաֆոր, վորը նշում է հակառակորդի դեմ կրակի ուժեղացումը, յերբ հայտնաբերվում են նրա կողմից կոպիտ սխալներ տեղանքին հարմարվելու ու քողարկվելու վերաբերյալ: Այդ սաստիկ բարձրացնում է հետաքրքրությունը դեպի ուսուցումը: Վարժությունը կրկնվում է հակադաշտեր հագած:

Ջ–դ(գ). Սովորքների մշակում հոտաներ բացումատարի մեջ՝ հրաձգային քարտ կազմելու վերաբերյալ

Վարժության մշակումն սկսվում է նրանից, վոր դեկտարոն ցույց է տալիս հրաձգային քարտի որինակելի կատարում:

Անուհետև ինքնին՝ կրտսեր հրամատարներն են այդ աշխատանքը կատարում ինքնուրույն սկզբում՝ մինիատյուր—պոլիգոնի վրա և ապա՝ դասարանում. աշխատանքը հաջող կատարողները նույն այդ աշխատանքը կատարում են դաշտում:

ՀԵՍ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ—ССРА им. А. Мясникяна

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, երբ բոլոր կրտսեր հրամատարները վոչ ավելի քան 10 րոպե ժամանակամիջոցում կկարողանան կազմել հրաձգային քարտ, վորով հրամատարն անծանոթ տեղանքում կկարողանա գտնել այն բոլոր տեղերը, վոր պատկերացված են քարտի վրա:

2–ե(դ). Սովորողների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ կազմակերպելու դիտողությամբ հետախուզություն ջոկի համար նշանակված սեկտորի սահմաններում

Վարժության նպատակն է, վոր ջոկի հրամանատարը սովորքներ ձեռք բերի՝ արագ գնահատելու տեղական առարկաները և առաջնակարգ տեղանքը դիտողություն հաստատելու և ջոկի մարտիկների միջև օբյեկտները բաշխելու համար:

Վարժության մշակումը տարվում է փոքրիկ թռուցիկ խնդիրներ լուծելու ձևով դաշտում ամենաբազմապիսի տեղանքում:

2–զ(ե) Սովորողների մշակում կրտսեր հրամատարի մեջ տանկային գրոհի դեմ պաշտպանվելու վերաբերյալ

Վարժության նպատակն է, վոր կրտսեր հրամատարը սովորքներ ձեռք բերի տեղանքի արագ գնահատման մեջ տանկերի հնարավոր գործողությունների տեսակետից և կարողանա ընտրել տանկերի համար անմատչելի տեղեր ջոկը դասավորելու համար, իսկ տանկերի համար խոչընդոտների բացակայության դեպքում՝ կկարողանա ստեղծել արհեստական խոչընդոտներ:

Վարժությունն սկսում է նրանից, վոր կրտսեր հրամատարների խմբակը զննում է տեղանքը պայմանով, վոր ղեկավարը տալիս է բոլոր հանդիպած խոչընդոտների գնահատականը՝ տանկերի կողմից նրանց հաղթահարման հնարավորության տեսակետից:

Դրանից հետո, նոր տեղանքում իրենք կրտսեր հրամանատարներն են կատարում տանկային խոչընդոտների գնահատականը:

Այս վարժությունն ավարտվում է նրանով, վոր ցույց է տրվում թիերի (եսկարպների լեփերի) ոգնությամբ արհեստական խոչընդոտների, հակատանկային ականների, հորերի ձևով ապաստարանների կառուցումն առանձին կարմիր բանակայինների, նռնակաձիգների համար և վերջապես՝ ցույց են տրվում քողարկման միջոցներ:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, երբ յուրաքանչյուր կրտսեր հրամանատար կգիտակցի, վոր անհրաժեշտ է միշտ մտածել հակատանկային միջոցառումների մասին և սովորել ոգտագործել և կառուցել այդպիսի միջոցներ:

2–ը (ժ) Սովորբների մշակում կրտսեր հրամատարի մեջ իր դասավորության մոտերբում գնահատելու տեղանքը գիշերով գնդացրի ու հրաձիգների համար դիրքեր ընտրելու տեսակետից:

Այս պարապմունքն սկսվում է ցերեկով դիրքերի ընտրությամբ, իսկ մութն ընկնելուց հետո կատարվում է այդ դիրքի թերությունների վերլուծումը տեսածրի ու գնդակոծի տեսակետից: Գիշերով ջոկի հրամատարները կհամոզվեն, վոր վերևից ներքև ավելի վատ է յերևում, քան թե ներքևից վերև, մանավանդ յերբ հակառակորդն ուրվագծվում է յերկնքի ֆոնի վրա:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ ջոկի հրամատարը ցերեկով կարողանում է նշել դրավելու համար այնպիսի տեղեր, վորոնք գիշերով նույնպես կհամապատասխանեն տեսածրի պայմաններին և միևնույն ժամանակ կբռնեն հակառակորդի ամենից հավանական մատույցները, վորը կդերադասի գիշերով շարժվել ձորակներով:

2–թ (զ). Սովորբների մշակում կրտսեր հրամատարի մեջ հակաքիմիական պաշտպանություն կազմակերպման վերաբերյալ

Վարժության նպատակն է.—*Հմտություն պատրաստել կրտսեր հրամատարի մեջ շարունակ հաշվի առնելու հակառակորդի կողմից քիմիական միջոցներ գործադրելու հնարավորությունը և դրա համաձայն վճռելու, թե տրվյալ կոնկրետ պարագայում հատկապես ինչպիսի քիմ հարձակում է ամենից հնարավոր և հակաքիմիական ինչպիսի միջոցառումներ են անհրաժեշտ անցկացնել:*

Վարժությունն սկսվում է կրտսեր հրամատարների խմբակով տեղանքի զննությունից, ըստ վորում ղեկավարը, մատնանշելով տվյալներ հակառակորդի ու մեր զորամասերի մասին, յեզրակացություն է անում՝ հակառակորդի կողմից քիմհարձակման հնարավորությունների մասին, միաժամանակ ուշադրություն դարձնելով տեղանքի ռելյեֆի, որվա ժամանակի ու յեղանակի տվյալների վրա:

Այնուհետև վճռում է, թե ինչ է անհրաժեշտ ձեռնարկել հակաքիմիական պաշտպանությունից, ա) պարզել, թե հակաքիմիական պաշտպանության ինչ ազդանշան է սահմանված, յերբ այդ մասին առաջուց չի հաղորդել դասակի հրամատարը. բ) հաղորդել ազդանշանը կարմիր բանակայիններին և ստուգել, թե նրանք գիտե՞ն արդյոք այդ. գ) ստուգել պաշտպանության միջոցները և միջոցներ ձեռք առնել լրացնելու պակասը և փոխարիներու անսարքիններին. դ) բացատրել Կարմիր բանակայիններին այն նշանները, վորոնցով կարելի յե դատել քիմհարձակման սկզբի մասին. ե) ստուգել, թե կարողանո՞ւմ են նրանք արդյոք հաղ-

նել պաշտպանության միջոցները. զ) վճիռ ընդունել այն դեպքի համար, յերբ հակառակորդը կգործադրի ծուխ և այլն:

ԽՆԴԻՐ ՅԵՐՐՈՐԴ

ԶՈԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նախ քան խնդրի մշակումը և խնդրի մշակման հետ միաժամանակ հարկավոր է ուսումնասիրել Հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասի 10,12,16,31, 114–117, 161–169-րդ հոդվածները. ԿՄԾ 1–6, 22–35-րդ հոդվածները և «Հակառաջային պաշտպանության հրահանգի» համապատասխան հոդվածները:

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը.— 1) Ստուգել ջոկի հրամատարին, թե ինչ չափով է կարողանում.

ա) կազմակերպել ջոկի կրակը չրջապատման պարագայում և գործնականում իրականացնել համառությունը պաշտպանության մեջ.

բ) ոգնել հակագրոհին խորքից բացած կրակով, իսկ վորտեղ հարկավոր է՝ նաև չարժումով դեպի թևն ու թիկունքը.

գ) գնահատել նշանները, ընտրել նշաններ հարվածման համար, խնդիր առաջադրել գնդացրերին ու հրաձիգներին, հրամաններ տալ պաշտպանության մեջ գործելու համար

և անհրաժեշտ դեպքերում տալ հրամաններ (կոմանդաներ) ու ազդանշաններ.

դ) պայքարել մարտապաշարների ծախքի կրճատման համար և կազմակերպել նրանց լրացումը.

ե) կազմակերպել ջոկի աշխատանքը՝ յետ մղելու համար տանկերի դրոհը.

զ) գործել քիմհարձակման և հակառակորդի կողմից ծխի գործադրության պայմաններում.

է) կազմակերպել վարակված զենքի դադաթափումը:

2) Ստուգել կրտսեր հրամատարին, թե ինչ չափով նա գիտե.

ա) Հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասի 114, 117, 162, 164–169-րդ հոդվածները.

բ) «Հակառաջային պաշտպանության հրահանգի» հոդվածները:

Կատարման կարգը: Կատարման ստուգումն անց է կացվում ջոկի կողմից պաշտպանության կազմակերպման խնդրի լուծման ձևով՝ 2-ե (դ) վարժության համեմատ, վորից հետո լուծում են թռուցիկ խնդիրներ՝ հմտության ստուգման կետերի վերաբերյալ, կամ համապատասխան ձևով նշելով հակառակորդին, վորը գործում է զեկավարի ազդանշաններով. կատարվում է ջոկի հրամատարի, ամբողջությամբ վերցրած ամբողջ ջոկի և

մասնավորապես Կարմիր բանակայինների աշխատանքի ստուգումը։

Վարժությունը կրկնվում է հակադաղեր հաղած։

Գնահատականը՝ «գերազանց», յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ Կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 3 տուգանային աշկո։

«Լավ», յերբ հրամատարը վստահորեն կատարում է բոլոր պահանջները, ստանալով հրամատար-դեկավարից վոչ ավելի, քան 2 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 4 տուգանային աշկո։

«Բավարար», յերբ հրամատարը ստանում է վոչ ավելի, քան 3 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները վոչ ավելի, քան 5 տուգանային աշկո։

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3-ա (ա) Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ պրակտիկայում ջոկի շուրջանակի պաշտպանություն կազմակերպելու վերաբերյալ

Վարժության նպատակը.— Սովորեցնել կրտսեր հրամատարներին՝ ջոկը պաշտպանության դասավորելիս գնահատել տեղանքը և նշել կրակային դիրքերը գնդացրի ու հրաձիգների համար վոչ միայն դեպի դասակի հրամատարի մատնանշած կողմը, այլև նախատեսել հակառակորդի յերևալու հնարավորությունը թևերից ու թիկունքից և վարժվել պրակտիկայում իրագործել շուրջանակի պաշտպանություն՝ թևերում ու թիկունքում հակառակորդի ճեղքման դեպքում։

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, երբ ջոկի հրամատարը կարողանում է արագ իրագործել ամբողջ ջոկի կամ նրա մասի ճակատի դարձումը ճեղքած կամ շրջապատած հակառակորդի ուղղությամբ, միևնույն ժամանակ չթողնելով առանց դիտողության ու պաշտպանության նախկին ուղղությունը։

3-բ (բ). Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ համառ պաշտպանության կազմակերպման վերաբերյալ

Վարժության նպատակն է.— Ամրացնել հրամատարի ու ստորաբաժանման մեջ այն գիտակցությունը, վոր անհրաժեշտ է համառ պաշտպանություն վարել մինչև իսկ շրջապատման պարագայում և սովորքներ մշակել նրանց մեջ գտնելու մեր 2-րդ շարանների հակադրոհի սկզբի մոմենտն այն հաշվով, վոր հակադրոհը պաշտպանվի՝ ուժեղացնելով կրակը դեպի ճեղքած հակառակորդի թևն ու թիկունքը, միևնույն ժամանակ փոխելով դիրքը և անցնելով թշնամու թիկունքը՝ ավելի լավ հարվա-

ծելով հակառակորդին կրակով և խափանելով նրա նահանջի ճանապարհները:

Վարժության մշակումն սկսվում է մինիատյուր—պոլիգոնում և ավարտվում է դաշտում, նշելով թե՛ ներխուժած հակառակորդին և թե՛ հակադրոհող ստորաբաժանումներին:

Վարժությունը կրկնվում է հակադազով:

3–գ (վ)· Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ նշանների գնահատականի, գնդացրին ու հրաձիգներին կրակային խնդիրներ առաջադրելու և նրանց հրամաններ տալու վերաբերյալ

Վարժությունը մշակվում է հրաձգային թռուցիկ խնդիրների լուծման ձևով սկզբում հետևակային մինիատյուր–պոլիգոնում և ապա դասարանում. յուրացնելուց հետո պարապմունքն անցեկացվում տեղանքի վրա առանց կարմիր բանակայինների և ավարտվում է ամբողջ ջոկի ուսուցումով:

Հետևակային մինիատյուր–պոլիգոնում հրաձգային խնդիրների մշակման համար ապահովվում է տարբեր տարածությունների վրա վառ արտահայտված առանձնահատկություններով տարբեր նշանների ցուցադրանքը (հրանոթ, գնդացիր, սպա, ոճաշար, ձիավոր, բեռնավոր հետևակով): Մինիատյուր–պոլիգոնի շրջանակի վրա կամ նշանների դասավորման ռայոնում կողմորոշների վրա դրվում են մակագրություններ, որոնք ցույց են տալիս

պաշտպանվող ջոկի դասավորության վայրից մինչև նշանները յեղած հեռավորությունը:

Հետագայում այս կամ այն նշանի հայտնվելը վորոշ հեռավորության վրա ազդանշան է հանդիսանում ջոկի հրամատարի համար՝ նշանները գնահատելու, նրա հարվածման վերաբերյալ վճիռ ընդունելու, հրաձիգներին ու գնդացրին խնդիրներ առաջադրելու և կրակի ղեկավարման հրամաններ տալու համար այն դեպքերում, յերբ դրանց կարիքը կլինի:

Թռուցիկ խնդիրների որինակներ:

Թռուցիկ խնդիր 1·— «1000 մետրի վրա հայտնվել են հակառակորդի մի քանի առանձին հրաձիգներ (դեռք)»:

Լուծում·— Նշանը սակավ կարևոր է· կրակ չի բացվում:

Թռուցիկ խնդիր 2·— «Դեռքի յետևից բլրակի վրա դուրս յեկան մի խումբ սպաներ»:

Լուծում·— Ա.բրադ հրաման տալ գնդացրին ու հրաձիգներին կրակ բանալ· գնդացրին՝ նորմալ հերթերով, հրաձիգներին՝ շտապ կրակ: Նշանները դնում են իրենք գնդացրորդները ու հրաձիգները:

Թռուցիկ խնդիր 3·— «3800 մետր հեռավորության վրա յերևաց դիտող»:

Լուծում·— 1–ին ջոկի գերազանց հրաձիգը խփում է նրան:

Թռուցիկ խնդիր 4·— «700 մետր հեռավորությունից հակառակորդի ձեռի գնդացիրը կրակ է բացել ջոկի դասավորության տեղի վրա

և միաժամանակ 200 մետր հեռավորության վրա յերևացել է հրաձգային լայն շղթա»:

Լուծում.— Արագ ցույց տալ նշանները: Բաշխել կրակը: Գնդացիրն ու գերազանց հրաձիգը խփում են հակառակորդի գնդացրին: Հրաձիգներն ինքնուրույն, բաշխելով կրակն ըստ շղթայի ամբողջ լայնության, վարում են շտապ կրակ և այլն:

Նույն ձևով մշակվում է խնդիրը հրաձգավայրում, նշելով հակառակորդին հայտնվող թիրախներով այնպես, որ հեռավորությունները վորոշեն իրենք սովորողները:

Ավելի ուշ նույն այդ վարժությունը կրկնվում է վարժական դաշտում՝ մարդկանցով նշված նշաններով: Վարժությունը կրկնվում է հակագաղ հաղած:

Վարժության մշակումն ավարտվում է ջոկի հրամատարների քննական ստուգումով.

ա) նշանների գնահատման վերաբերյալ.

բ) նշաններ ցույց տալու վերաբերյալ.

գ) հրամաններ և պատվերներ տալու վերաբերյալ:

Գնահատականը.— «Գերազանց»— կատարել առանց սխալների.

«Լավ»— կատարել, ստանալով ուղղում վոչ ավելի, քան մի կետից.

«Բավարար»— Նույնը, բայց ստանալով ուղղում վոչ ավելի քան յերկու կետից:

2–ղ (գ). Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ փամփուշտների ծախսի կրճատման ու նրանց լրացումը կազմակերպելու վերաբերյալ

Վարժության նպատակն է.— Հասնել նրան, վոր ջոկի հրամատարը չթողնի առանց ներգործության վոչ մի աննպատակ ձիգ, հոգատանի կրակի կարգապահության մասին և արագ արձագանքի փամփուշտների պաշարի կեսի ծախսման վերաբերյալ Կարմիր բանակայիններին զեկուցմանը, կարգադրելով փամփուշտների լրացման մասին:

Վարժությունը մշակվում է դաշտում, համատեղելով «3–բ (բ)» վարժության մարզանքի հետ:

Կատարման կարգը հետևյան է.

Յուրաքանչյուր Կարմիր բանակայիններին ու գնդացրին տրվում են փոքրիկ տալոններ, վորոնցից յուրաքանչյուրը գնդացրի համար նշանակում է սկավառակ, իսկ հրաձգի համար՝ 10 փամփուշտ:

3–բ (բ) վարժությունից թռուցիկ խնդիրների լուծման ընթացքում, հետզհետե գնդակների արձակման հետ, հաշվի առնելով գնդացրի հերթերի թիվը և հրաձգի ձիգերի մոտավոր թիվը, միջնորդը հավաքում է տալոնները գնդացրորդից ու հրաձիգներից:

Յերբ Կարմիր բանակայինները չեն զեկուցում փամփուշտների կեսի ծախսման մասին,

յերբ հրամատարը հոգ չի տանում փամփուշտներ ստանալու և կրել-հասցնելու մասին (փամփուշտները տալոններ են, վորոնք դարսված են այնպիսի արկղերի կամ տոպրակների մեջ, վորոնք իրենց քաշով համապատասխանում են փամփուշտների բերվող պաշարի քաշին),—այդ դեպքում ջոկը կարող է մնալ առանց փամփուշտի և փաստորեն դառնում է անմարտունակ:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ ջոկի հրամատարն ամենալարված մարտի ժամանակ ապահովում է մարտապաշարի խնայողաբար ծախսումը և, կարգավորելով փամփուշտակիրների աշխատանքը, ապահովում է մարտապաշարների ծախքի անընդհատ լրացումը, փամփուշտներ հասցնելով դասակային փամփուշտակայանից:

3-ե (դ) Սովորքների մշակում ջոկի հրամանատարների մեջ՝ հակառակորդի հետ միատեղ տանկերի գրոհի միջոցին ջոկի ղեկավարման վերաբերյալ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել հրամատարին մանյովրել զնդացրի ու հրաձիգների կրակով՝ կռվելու համար տանկերի ու հետևակի դեմ և հրամատարի կողմից սովորքներ ձեռք բերել՝ «կործանիչներին նետել նռնակներ՝ ծածկվել տանկերից» ազդանշանը տալու համար մոմենտի ընտրության մեջ, վորպիսի ազդանշանը տրվում է տանկն ուղղակի կրակային կետի վրա շարժվելիս այն մոմենտին, յերբ տանկը կմոտենա 40-50 մետր հեռավորության վրա:

Հենց վոր տանկը կխփվի կամ կգա-կանցնի, ջոկի հրամատարը վերսկսում է կրակը հարձակվող հետևակի դեմ:

Վարժությունը մշակվում է տեղանքում, ըստ վորում անպայման պետք է լինի տանկ-մակեթ, վորը շարժվում է մի ժամում 20—30 կլմ. արագությամբ (ամենից լավ է ունենալ մարդատար կամ ապրանքատար մեքենա՝ քողարկված տանկի ձևով), իսկ մեքենայի համար դժվարանց տեղանքով կարելի յե գործադրել արշավով վազող ձի, վրան հագցրած՝ տանկի տեսքով կարած խալաթ:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ ջոկի հրամատարը դանում է նռնակների նետման մասին ազդանշան տալու մոմենտը և առանց ժամանակ կորցնելու կրկին կազմակերպում է կրակը հարձակվող հետևակի դեմ, աչքից չկորցնելով թիկունքն անցած տանկին:

3-զ (ե) Սովորքների մշակում կրտսեր հրամատարների մեջ քիմհարձակման և հակառակորդի կողմից ծխի գործադրության պայմաններում ջոկի ղեկավարման վերաբերյալ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել հրամանատարին գործել՝ հակառակորդի կողմից քիմհարձակման զանազան միջոցների կիրառման պայմաններում:

Հաջորդաբար պետք է ուսումնասիրվեն

հետևյալ հարցերը. ջոկի գործողությունները, յերբ հակառակորդը հանկարծակի գնդակոծում է անկայուն թն ականներով. վորոշել հակառակորդը հանելու հնարավորության մոմենտը. բեկորավոր քիմիական արկերով գնդակոծը. ինչպես վորոշել թն գործադրությունը. գործողություններն այնպիսի պայմաններում, յերբ հակառակորդն ոգտագործում է կայուն թն սավառնակներից և վերերկրյա միջոցներով. խրամատների ու պաշտպանության միջոցների վարակումը. առանձին մարտիկների վնասները կայուն թն կաթիլներով. ջոկի կուրացումը լուսածնային արկերով կամ ծխի ալիքով և այն:

Վարժությունը մշակվում է տեղանքում մի շարք միջանկյալ խնդիրների լուծման միջոցով:

3-ը (ժ) Սովորբների մշակում վարված գենի գազաթափումը կազմակերպելու մեջ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել կազմակերպել և անցկացնել հրացանների ու գնդացրերի գազաթափումն, տեղափոխելով մի այլ (չվարակված) դիրք կարճ ժամանակամիջոցում, պահպանելով նախազգուշական միջոցները և առանց կորելու ջոկը մարտական աշխատանք կատարելուց: Վարժությունն անց է կացվում դաշտում՝ առանձին վարժական հրացանների ու գնդացրերի գազաթափման վերաբերյալ գործնական աշխատանքի միջոցով:

ԽՆԴԻՐ ՉՈՐՐՈՐԴ

ՄԵՐՁԵՑՈՒՄՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Նախքան խնդրի մշակումը և խնդրի մշակման հետ զուգընթացաբար կրտսեր հրամատարներն ուսումնասիրում են հետևակի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 1, 3, 8, 13, 60, 61, 62 152-րդ հոդվածները, ԿՄԾ 1—6 36—37, 42, 46, 48, 49, 50, 51 հոդվածները և «հակաքիմիական պաշտպանության հրահանգի» համապատասխան հոդվածները:

ԳՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը 1) ստուգել, թե ջոկի հրամատարն ինչ չափով է կարողանում.

ա) գնահատել տեղանքն առաջիկա շարժման ուղղությամբ, նպատակ ունենալով հայտաբերել այն կետերը, վորոնց գրավումը հակառակորդի կողմից առանձնապես վտանգավոր է ջոկի համար և վորոնց գրավման մեջ պետք է կանխել հակառակորդին. նշել այն միջոցառումները, վորոնք թուլացնում են՝ հակառակորդի կողմից, այդպիսի տեղերի գրավման վնասը.

բ) ճշտել շարժման մատնանշած ուղին՝ հակառակորդի հնարավոր հետախուզությունից լավագույն ձևով ծածկվելու և շարժման լավագույն հարմարության տեսակետից.

գ) ղեկավարել ջոկը հրամանների, հրա-

հանգների (կոմանդաների) և ազդանշանների ոգնությամբ պարապալի, տեղանքի ու հակառակորդի վրա ունեցած ներգործության բազմազան, հաճախակի փոփոխվող պայմաններում, ինչպես նաև քիմհարձակման պայմաններում:

դ) հաղթահարել կայուն թն վարակված շերտերն, առանց գործադրելու պաշտպանության հատուկ միջոցներ:

ե) կազմակերպել պաշտպանություն՝ ավիաքիմհարձակման ժամանակ.

2) ստուգել, թե ջոկի հրամատարն ինչ չափով գիտե.

ա) հետեվակի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 60, 61, 62, 152-րդ հոդվածները.

բ) ԿՄԾ 36, 37-42, 45, 46, 49, 50, 51-րդ հոդվածները.

գ) «հակաքիմիական պաշտպանության հրահանգի» հոդվածները:

Կատարման կարգը.— Ստուգումն անց է կացվում ջոկի միակողմ պարապմունքի ձևով, միևնույն ժամանակ նշված ունենալով հակառակորդ, վորը ղեկավարվում է ղեկավարի կողմից:

Գնահատականը.— «Գերազանց», յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ Կարմիր բանակայիններն ստանում են վոչ ավելի, քան 3 տուգանային աչկո.

«Լավ», յերբ հրամատարը վստահորեն

կատարում է պահանջները, ստանալով հրամատար- դեկավարից վոչ ավելի, քան 2 ուղղում, իսկ Կարմիր բանակայիններն ստանում են վոչ ավելի, քան 4 տուգանային աչկո:

«Բավարար», յերբ հրամատարը ստանում է վոչ ավելի քան 3 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները վոչ ավելի, քան 5 տուգանային աչկո:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

4-ա (ա) Սովորբների մշակում կրտսեր հրամատարի մեջ այն տեղանքի գնահատման վերաբերյալ, վորտեղ նախատեսվում է շարժումը

Վարժության նպատակն է՝ սովորեցնել կրտսերի հրամատարին ամեն տեսակ պարագայում ամենից առաջ՝ շարժվել առաջ, թեթեվակիորեն գնել առաջ ընկած տեղանքը և պատասխան տալ իրեն հետևյալ հարցերին.

1) հակառակորդի կողմից տեղանքի վո՛ր կետի դրավումն ամենից շատ կխանգարի ջոկի խնդրի կատարմանը. 2) ինչպես կանխել հակառակորդին այդ կետի դրավման մեջ. 3) ինչպես թուլացնել խոչընդոտը, յերբ հակառակորդին այնուամենայնիվ հաջողվի դրավել այդ կետը. 4) վորտեղ կարելի յե սպասել վարակված տեղամասեր:

Վարժությունը մշակվում է սկզբում՝ մինիատյուր-պոլիգոնում մերձեցման խնդրի

լուծման ձևով և ապա ամրացվում է հակառակորդի գործողությունների և դրանց հակազդելու համար միջոցներ գտնելու վերաբերյալ թռուցիկ խնդիրների լուծումով: Դրանից հետո՝ նույնպիսի վարժություններ անց են կացվում հրամատարական պարապմունքներում՝ դաշտում:

4-բ (բ) Սովորողների մշակում ջոկի հրամատարների մեջ ջոկի զանազան կարգեր ու շարումներ գործադրելու վերաբերյալ մերձեցման պրոցեսում, նայած տեղանքին ու հակառակորդի սպասվող կրակին

Վարժության նպատակն է՝ հասնել նրան, որ ջոկի հրամատարը գիտակցորեն ընտրի ջոկի ճիշտ շարժումներ թշնամու հետ մերձեցման պրոցեսում, նպատակ ունենալով լավագույն ձևով ծածկվել հակառակորդի դիտողությունից և կրճատել կորուստները հրետանական կրակի, սավառնակների ու զնդացրերի հանկարծակի զնդակոծման դեպքում:

Վարժությունը մշակվում է հրամատարների խմբակային պարապմունքի ձևով տեղանքում, ջոկի ղեկավարման խնդիր լուծելով հակառակորդի հետ մերձեցման ժամանակ:

Պարապմունքը կարելի է կազմակերպել այսպես.

Ղեկավարը, նշելով պարապմունքների համար կարտուկ տեղանք վորպիսի տեղանքը

կպահանջի հրամատարներից շարքերի ու կարգերի փոփոխման ճարտարություն, պարապմունքների համար նշանակած ժամերին կրտսեր հրամատարների խմբակի հետ միասին մեկնում է դաշտը:

Նշանակելով ջոկի հրամատարներից մեկին ջոկի հրամատար և մնացած հրամատարներին՝ ջոկի կարմիր բանակայինների դերում, ղեկավարն առաջադրում է մոտավորապես այսպիսի խնդիր. «Հակառակորդն սպասվում է Լոբաչևկա գյուղի կողմից (ձեռքով ցույց է տալիս գյուղի ուղղությունը). հակառակորդի հետախուզությունը ժամանակի հաշվով կարող է լինել այն բարձունքներում (դարձյալ ցույց է տալիս). առաջնորդեցեք ձեր ջոկին այնպես, որ ձեր շարժումը հակառակորդը չնկատի»:

Ջոկի հրամատարը նշում է շարժման ուղին, և յեթե այդ չի հակասում ղեկավարի մտադրություններին, վերջինս թույլ է տալիս անցնելու աշխատանքի: Ջոկի հրամատարը շարում է և տանում է իր ջոկը: Ղեկավարը, ջոկի հետ միասին գնալով նրա յետևից, հետևում է տրվող հրամաններին ու նրանց կատարմանը և միաժամանակ ուշադրություն է դարձնում տեղանքի առանձնահատկությունների վրա, նրա տեսանելիության վրա հակառակորդի դիտողների յենթադրվող դասավորության կողմից և այն հետևությունների վրա, որ հարկավոր է անել: Սխալներ հայտարերելով թե՛ վճիռներում և թե՛ հրամաններում ու նրանց կատար-

ման մեջ. ղեկավարը կանգնեցնում է դասակին, ներդրավում է բոլոր կրտսեր հրամանատարներին վերլուծմանը, հայտարերում է թույլ ված սխալը, վերացնում է այդ սխալը և, ղեկավարությունը հանձնելով այն կրտսեր հրամատարներին, վորն առաջարկել է լավագույն վճիռը, կրկին շարունակում է պարապմունքը:

Պարապմունքի ընթացքում անպայման մշակել կիրճերի անցումը, շարժումը մանր թփուտներով, անտառով, գյուղի միջով, հարթ դաշտով, փակ՝ դիտվող տեղանքով, կայուն թն վարակված տեղանքով և այլն:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ բոլոր կրտսեր հրամատարները հաստատապես կյուրացնեն ջոկի շարումների ու կարգերի կախումը ինդրից, տեղանքից, մինչև հակառակորդը յեղած հեռավորությունից և սպասվող վտանգից:

4–գ (վ) Սովորբների մշակում արագ փոփոխելու ջոկի շարումներն ու կարգերը հակառակորդի կրակի տակ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ջոկի հրամատարներին արագ գնահատել պարագան, վճիռ ընդունել ջոկի շարումը փոխելու վերաբերյալ և վերաշարումներ կատարել հրետանու կրակի ազդեցության տակ, սավառնակներից գնդացրային կրակով գնդակոծման ժամանակ, սավառնակներից թն շաղ տալու կամ

ռումբեր նետելու ժամանակ, ըստ մակերեսների գնդացրային կրակով գնդակոծման և մոտ տարածություններից գնդացրերի ու հրացանների գործոն կրակի տակ:

Վարժությունը մշակվում է դաշտում «4–բ (բ)» վարժության պարապմունքը շարունակելու միջոցով, զուգընթացաբար տալով միջանկյալ խնդիրներ հակառակորդի գործողությունների վերաբերյալ և լուծելով մոտավորապես այսպիսի թռուցիկ խնդիրներ.

Թռուցիկ խնդիր 1.—«Անտառի կողմից 1500 մ. բարձունքի վրա նկատվել է սավառնակ: Իր ուրվանկարով սավառնակը նման է հակառակորդի սավառնակին: Գործեցե՛ք»:

Լուծում.— Ջոկի հրամատարը շարունակում է շարժումը, յերկայնաձգվելով այնպես, վոր հեշտ լինի ոգտագործել ծածկարանները դիտողությունից և կարելի լինի գտնել ծածկարան ռումբերի կտորներից, յեթե ռումբեր կնետվեն սավառնակից: Կրտսեր հրամատարներից մեկն առաջարկում է կրակ բանալ սավառնակի դեմ, մյուսն ասում է, վոր պետք է կանգնեցնել ջոկի շարժումը: Վճռի վերլուծման ժամանակ ղեկավարն ամենից առաջ նշում է, վոր գնդակոծն ոգուտ չունի և այնուհետև բացատրում է, վոր յեթե չպահանջվեր շարժման շտապողականությունը, հնարավոր եր նաև կանգնեցնել ջոկը և ծածկվել, ոգտագործելով ամեն տեսակ առարկների ստվերոտ կողմերը:

Թռուցիկ խնդիր 2.— «Ջոկը մոտենում է հակառակորդի հրետանական կրակով գնդակոծվող բլրակին»:

Լուծում.— Ջոկը վերաշարվում է ոճաշարով, իսկ մոտենալով այն շերտին, որը գնդակոծվում է կրակով, հաղթահարում է այդ շերտը՝ փոփոխակի ձևով վազքով ու քայլով, բայց վոչ կանգ առնելով, նպատակ ունենալով ըստ հնարավորին շուտ անցնել այդտեղից:

Թռուցիկ խնդիր 3.— «Ջոկը ծածկված մոտեցել է մոտ 50 մետր յերկարությամբ ճեղանուղուն, որը դիտվում է մոտ 800 մետր հեռավորության վրա գտնվող փոքր սարից, որտեղ նկատված են հակառակորդի անհատ հրաձիգներ: Ճեղանուղու յերկու կողմից ճահիճն անանցանելի յե: Մյուս ափին տեղանքը ծածկված է հակառակորդի դիտողությունից»:

Լուծում. իր հրամատարի հրամանով ջոկը վազում-անցնում է միաժամանակ յերամաշարով.

Մյուս հրամատարների կողմից առաջարկներ կան՝ հաղթահարել մի-մի հոգով կատարած վազեվազքով:

Վերլուծման ժամանակ ղեկավարը, չեշտելով ընդունված վճռի ոգտակարությունը, որն ապահովում է հանկարծակիությունը, նկատում է, որ մի-մի հոգով կատարած վազեվազքը հնարավորություն կտար հակառակորդին կենտրոնացնելու ճեղանուղու վրա մի քանի հրաձիգների կրակը, որոնք կրակելով յուրաքանչյուր վազեվազք կատարողի վրա, կարող եյին հերթով հարվածել ամբողջ ջոկը:

Վարժության մշակումը ավարտված է համարվում, յերբ խմբակի բոլոր կրտսեր հրամատարները կկատարեն ջոկի հրամատարի դերը, և յերբ նրանցից յուրաքանչյուրը բավարար կլուծի մի քանի թռուցիկ խնդիր, ըստ վորում շարումների ու վերաշարումների առնվազն մի յերրորդ մասը լուծվում է կանոնագրքային ու պայմանավորված նշանների ու ազդանշանների ոգնությամբ:

Այս վարժության մշակման ընթացքում ջոկի հրամատարները պրակտիկա յեն ստանում տեղանքում հանդիպած խոչընդոտների հաղթահարումը կազմակերպելու մեջ, վորպիսի խոչընդոտները պրակտիկայի նպատակով վոչ թե շրջանցվում, այլ հաղթահարվում են:

4-դ (գ). Սովորքների մշակում կայուն թն վարակված շերտերի հաղթահարման մեջ

Վարժության մշակումը նպատակ ունի ջոկի հրամատարին պրակտիկա տալու ԿՄԾ 15-րդ հոդվածում հանձնարարված ճարտարությունների գործադրության մեջ՝ հաղթահարելու համար կայուն թն վարակված շերտերը, չգործադրելով պաշտպանության հատուկ միջոցներ (ԿՄԾ հոդվ. 15):

4–ե (դ) Սովորքների մշակում ջոկի ղեկավարման մեջ հակառակորդի հետ մերձեցման պարագայում գիշերը մոտենալու ընթացքում, ինչպես նաև ֆիմհարձակման պարագայում

Վարժության նպատակն է ջոկի հրամատարի կողմից ճարտարություններ ձեռք բերելը ջոկի ղեկավարման գործում անաղմուկ հրամանների, ազդանշանների ու նշանների ոգնությամբ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում ղեկավարելու հակագաղ հագած:

Վարժությունը մշակվում է 4–բ (բ) և 4–գ (վ) վարժությունների մշակման համեմատ, միջանկյալ խնդիրներ տալով համաձայն գիշերային պարագայի:

Հատուկ ուշադրություն է դարձվում այնպիսի հրամանների ու շարումների գործածման վրա, որոնք ապահովում են անաղմուկ կատարումը (ԿՄԾ 64 և 65–րդ հոդվ.):

ԽՆԴԻՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ԳՆԴԱՑՐԱՑԻՆ ԳՈՐԾՈՆ ԿՐԱԿԻ ՇԵՐՏՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԳՐՈՀԻ ՀԱՄԱՐ ՑԵԼՄԱՆ ԴՐՈՒԹՑՈՒՆԸ

Նախ քան խնդրի մշակումը հրամատարները ուսումնասիրում են հետևյալի մարտական կանոնագրքի 2–րդ մասի 674–684, 714–720–րդ հոդվածները.

Կրկնում են ԿՄԾ 1–6, 36–46, 48–53–րդ

հոդվածները և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգի» համապատասխան հոդվածները:

ԳՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է՝ 1) *ստուգել հրամատարին, թե ինչ չափով է նա կարողանում.*

ա) գնահատել այն տեղանքը, որով նախատեսվում է հարձակումը՝ ծածկված մատույցների ընտրության և ամենից վտանգավոր տեղերի հայտաբերման տեսակետից.

բ) ղեկավարել (առանց հակագաղի և հակագաղ հագած) ջոկը հարձակման մեջ, ընտրելով նրա համար այնպիսի ճանապարհ և շարումներ, որոնք կրճատում են հնարավոր կորուստները՝ առանց կորցնելու շարժման տեմպը.

գ) ղեկավարել ջոկի կրակը հարձակման ընթացքում, մանավանդ՝ հակառակորդի հետ հանկարծակի ընդհարումների դեպքում և քիմիական հարձակման պայմաններում.

դ) կազմակերպել կրակի ու շարժման համագործակցություն թե՛ հաստոցավոր գնդացրի ու հարևան ջոկերի հետ, և թե իր ջոկի ներսում:

ե) իրագործել կապը տանկերի հետ միատեղ հարձակման ժամանակ, ինչպես նաև ծխի պաշտպանության տակ գործողությունների ժամանակ.

զ) Կազմակերպել վարակված տեղամասերի հաղթահարումը.

2) Ստուգել հրամատարին, թե ինչ չափով նա գիտե.

ա) հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասի 674–684-րդ հոդվածները.

բ) ԿՄԾ 41, 42, 44, 46, 48, 49, 50, 51, 52, 53-րդ հոդվածները:

Կատարման կարգը.— Վարժությունն անց է կացվում յերկկողմ վարժության ձևով, ուեալ կերպով դնելով հակառակորդ, վորն ղեկավարում է ղեկավարը՝ վաղորոք սահմանված ու ճիշտ գրի առնված ազդանշաններով:

Այն զորամասերին, վորոնք պատկերացնում են հակառակորդին, պրակտիկայի նպատակով խնդիրներ են առաջադրվում համաձայն այն դերի, վոր նրանք կատարում են:

Վարժությունը կրկնվում է հակագաղ հաղած և հաղթահարելով վարակված տեղամասը, վորը նշվում է վարժական թն:

Գնահատականը.— «Գերազանց», յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ Կարմիր բանակայիններն ստանում են վոչ ավելի, քան 3 տուգանային աչկո.

«Լավ», յերբ հրամատարը վստահորեն կատարում է պահանջները, ստանալով հրամատար-ղեկավարից վոչ ավելի, քան 2 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 4 տուգանային աչկո.

«Բավարար», յերբ հրամատարը ստանում է վոչ ավելի, քան 3 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 5 տուգանային աչկո:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5-ա (ա). Սովորքների մշակում այն տեղանքի ուսումնասիրության վերաբերյալ, վորով նախատեսվում է հարձակում՝ հաստոցավոր գնդացրերի ու հրացանների ներգործության վոլորտում

Վարժության նպատակն է՝ սովորեցնել կրտսեր հրամատարներին արագ հասկանալու տեղանքի հատկությունները՝ հարձակման ժամանակ կորուստները կրճատելու համար այդ տեղանքն ոգտագործելու նպատակով:

Վարժության մշակման համար ընտրվում է միջին չափով կտրտուկ տեղանք, վորը հնարավորություն է տալիս մոտենալու աննկատելիորեն հակառակորդին 1500–2000 մ. հեռավորության վրա, վորտեղ և նշվում է վարժության մշակման սկզբի համար յելման դրությունը:

Հրամատարների խմբակի հետ յելման կետը գալով, ղեկավարը ցույց է տալիս, թե վորտեղ է դասավորված հակառակորդը (լավ է յեթե հակառակորդի հատկանիշները նշված լինեն դրոշակներով) և այն շերտը, վորը նշված է վաշտի դասակի հարձակման համար:

Պարապմունքների սկզբի համար յելման գիծն, ըստ խնդրի հանդիսանում է այն բնագիծը, վորից վաչի հաստոցավոր գնդացրերը պետք է ոգնեն դասակների հարձակմանը:

Այս բնագծից դասակի հրամատարը, ջոկերի հրամատարները գնահատում են այն տեղանքը, վորով նրանք հարձակվելու յեն հակառակորդի կրակի ներդործության տակ:

Գնահատելով տեղանքը, ամենից առաջ՝ հարկավոր է մոտավորապես պարզել, թե վորտեղ է անցնում հակառակորդի պաշտպանության առջևի յեզրը:

Դրանից հետո՝ ուշի-ուշով զննելով տեղանքը հակառակորդի պաշտպանության առջևի յեզրով ու նրա խորությամբ, յուրաքանչյուր ջոկի հրամատարը, դասակի փոխարեն լուծելով խնդիրը, պետք է աշխատի վորոշել.—

ա) Հակառակորդի յենթադրվող դիրքի վո՛ր տեղամասերն են յերևում հարձակվողի յելման բնագծից.

բ) Հակառակորդի պաշտպանության առջևի յեզրում վորտեղ կարող են լինել հակառակորդի գնդացիրներն ու հրետանական դիտակետերը.

գ) Պաշտպանության առջևի յեզրի առաջ տեղանքի այն մասերը, վորոնք ծածկված են պաշտպանվողի տեսածից և մանավանդ՝ այն մեռյալ տարածությունները, վորոնք անմիջորեն բերում հասցնում են դեպի հակառակորդի դիրքը և այն ծածկված մատույցները,

վորոնք կարող են ոգնել՝ առանց կորուստների բերել-հասցնել մեր դասակներն ու ջոկերը հարմարյա անմիջորեն դեպի հակառակորդի դիրքը:

Յերբ այդպիսի մատույցներ կնշվեն, կրմնա միայն, լավ դիտելով հակառակորդի դիրքը, վորոշել նրա առջևի յեզրում ու պաշտպանության խորքում յեղած այն կետերը, վորոնցից հակառակորդը կարող է թեկուզ և մասնակի ձևով դիտել կամ գնդակոծել հրամատարի նշած մատույցները:

Անցկացնելով այդպիսի ուսումնասիրություն տեղանքում, հրամատարը կարող է իր նվազատորաբաժանումը տանել հասցնել նվազագույն կորուստներով և առանց մարտ մղելու մինչև դրոհի համար յելման բնագիծը և կկարողանա առաջադրել կոնկրետ պահանջներ գնդացրորդներին ու հրետավորներին՝ ապահովելու համար իր առաջխաղացումը, ճնշելով, կուրացնելով ծխով հակառակորդի այն կետերը, վորոնք նշված են՝ վորպես ամենից սպառնալից կետեր:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ հրամատարը բոպեներով չափված ժամկետներում կկարողանա կատարել տեղանքի գնահատականը և կնշի բավարար մատույցներ՝ չչեղվելով իրեն տրված ուղղությունից:

5–բ(բ) Սովորբների մշակում հրամատարի մեջ ջոկի ղեկավարման վերաբերյալ հակագազ հագած և առանց հակագազերի՝ հաստոցավոր գնդացրերի կրակի պաշտպանության տակ հարձակման ժամանակ

Վարժության նպատակն է՝ *պրակտիկա տալ ջոկի հրամատարին ճշտելու համար ջոկի հարձակման ուղիներն այնպես, որ հնարավոր լինի ավելի լավ ծածկված մնալ հակառակորդի տեսածրից ու գնդակոծից և միևնույն ժամանակ չխանգարել հաստոցավոր գնդացիրներին կրակ վարել գլխավերևով և մանավանդ հարձակվող ջոկերի արանքներով, ինչպես նաև գործադրել ջոկի այնպիսի շարումներ, որոնք առավել չափով պահպանում են հակառակորդի կրակով հանկարծակի հարվածվելուց:*

Այս վարժության մշակումը կարող է հանդիսանալ «5–ա(ա)» վարժության աշխատանքի շարունակություն:

Ղեկավարը տեղանքը գնահատելուց և դասակին ու ջոկերին խնդիրներ առաջադրելուց հետո՝ նշանակում է կրտսեր հրամատարների խմբակից մեկին, որպես ջոկի հրամատար, իսկ մնացած կրտսեր հրամատարները կատարում են ջոկի կարմիր բանակայինների դերը, և ապա ղեկավարը հրամայում է անցնել գործողության:

Հակառակորդի կողմում, մոտավորապես

այն կետերի ռայոնում, որտեղ «5–ա(ա)» վարժության մշակման ժամանակ նշված եր հակառակորդի գնդացրերի դասավորության հնարավորությունը, ղեկավարը դնում է հակառակորդի գնդացրերը, նշելով նրանց կրակն ու նրա լարվածության աստիճանը սեմաֆորներով:

Հետագայում ջոկի հրամատարի յուրաքանչյուր սխալ՝ տեղանքին հարմարվելու ու քողարկվելու բնագավառում կազդարարվի սեմաֆորի բարձրացումով, որ նշում է գնդացրերի կրակը: Սխալների թուլացումը կնշվի փոքր ինչ իջեցրված սեմաֆորով, իսկ դերազանց քողարկմանը և տեղանքի դերազանց ոգտագործմանը պատասխան կհանդիսանա ցած թողած սեմաֆորը:

Որչափ ավելի քիչ կաշխատեն սեմաֆորները, այնքան ավելի լավ գնահատական կտրվի ջոկի հրամատարի աշխատանքին:

Վարժությունը կրկնվում է հակադաղ հադած:

5–գ(վ) Սովորբների մշակում ջոկի հրամատարի մեջ շարժման շերտում և հակառակորդի դասավորման ռայոնում հետախուզության կազմակերպման վերաբերյալ (*յերկրորդ դեպքում դիտողությամբ*)

Վարժության նպատակն է՝ *մարզանք տալ կրտսեր հրամատարներին խնդիրներ առաջադրելու մեջ՝ հետազոտելու բոլոր կասկածելի*

տեղերը շարժման ուղղությամբ մինչև ջոկի մոտենալը և մշտական դիտողություն սահմանելու հակառակորդի կրակային միջոցների գործողությունների նկատմամբ: Վերջին հանգամանքը հնարավորություն է տալիս ջոկի հրամատարին ավելի լավ ղեկավարելու իր ջոկի կրակը:

Վարժությունը մշակվում է դաշտում կամ մինիատյուր-պոլիգոնում թռուցիկ խնդիրներ լուծելու ձևով, սովորողներին տալով զանազան ուղղություններ և մարզելով նրանց՝ առաջնորդված տեղանքի հետախուզության կազմակերպման վերաբերյալ խնդիրների առաջադրության և հակառակորդի կրակային միջոցների գործողությունների վրա անընդհատ դիտողություն սահմանելու մեջ:

5-դ(գ) Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ իր ջոկի կրակի ղեկավարման վերաբերյալ հարձակման պրոցեսում

Վարժության նպատակն է՝ պրակտիկա տալ հրամատարին արագ վճիռ ընդունելու հանկարծակի հայտաբերած հակառակորդի կամ նրա գնդակոծի տակ ընկնելու ժամանակ կրակից պաշտպանվելու վերաբերյալ:

Այս վարժության մշակումը կատարվում է՝ թռուցիկ խնդիրների լուծման համար խմբովին դաշտ դուրս գալու միջոցով, որտեղ կրտսեր հրամատարից մեկը հերթով կատարում է ջոկի հրամատարի դեր, իսկ խմբակի

մնացած հրամատարները կարմիր բանակային ների դեր են կատարում և միաժամանակ ակտիվ մասնակցություն են ցույց տալիս հրամատարական խնդիրների մշակմանը, առանձին վճիռների ու թույլ տված խնդիրների քննարկմանը:

Թռուցիկ խնդիրների որինակներ.

Թռուցիկ խնդիր 1: «Ջոկը հաստոցավոր գնդացրերի կրակի պաշտպանության տակ հարձակվում է ծածկված մատույցով և, մոտենալով բլրակին, տեսնում է նրա յետևում 500-600 մետր հեռավորության վրա հակառակորդի մի ջոկ, որն առաջանում է ոճաշարով դեպի թփուտը, և նրան մնում է մինչև թփուտը հասնել անցնել մոտ 50 մետր»:

Լուծում. Ջոկի հրամատարը հրաման է տալիս. «Հակառակորդն ուղիղ բլրակի մոտ. նշանոց— 6. գնդացի՛ր, կրա՛կ հակառակորդին: Հրաձիգնե՛ր, հատ-հատ կրա՛կ»:

Թռուցիկ խնդիր 2. «Հակառակորդը մասամբ ջախջախված է. մասամբ փախել է: Ջոկը շարունակում է հարձակումը շղթայիկով: Հանկարծ մոտ 500 մետրի վրա յերևում են հակառակորդի վազելազք կատարող անհատ մարդիկ»:

Լուծում.— Ջոկի հրամատարը հրաման է տալիս. «Ցետ քաշվող հակառակորդի՛ն նշանոց՝ 5 կրա՛կ»: Հրաձիգներն ընտրությամբ հարվածում են հատ-հատ նշանները: Գնդացիր չի կրակում:

Թռուցիկ խնդիր 3. «Շարունակելով հարձակումը, ջոկը դուրս է յեկել բաց տեղանք և հանկարծ յենթարկվում է գնդակոծի առանձին տնակի կողմից մոտ 600 մետր հեռավորությունից»:

Լուծում.— Ջոկի հրամատարը հրաման է տալիս. «Պառկի՛ր: Տնակի մոտ հակառակորդին: Նշանոց՝ 6: Գնդացի՛ր, հերթերով: Հրաձիգնե՛ր, հատ-հատ կրա՛կ»: Այս հրամանով գնդացրորդներն ու հրաձիգները պառկում են, ճշտում են, թե վորտեղ է հակառակորդը և սողալով՝ դուրս գալով այն տեղանքը, վորտեղից ավելի հեշտ է հարվածել հակառակորդին, բացում են յուրաքանչյուրն ինքնուրույն կրակ, հարվածելով ավելի կարևոր նշանները, իսկ միատեսակ նշաններից նրանց, վորոնք հակառակորդի շարումի մեջ համապատասխանում են իրենց չղթայում յեղած կարմիր բանակայինի տեղին:

Ծածկարաններով առատ տեղանքում ջոկի հրամատարը հրաման է տալիս՝ «պառկի՛ր», «ծածկվի՛ր», իսկ ինքը դիտողի հետ միասին մոտակա ծածկարաններից դիտում է հակառակորդին, վորից հետո հրամայում է մարտիներին առաջ անցնել, առանց հայտնաբերելու իրենց և հրամանով կրակ բանալ գնդացիրներով ու հրաձիգներով:

Յերբ ջոկի հրամատարը սխալներ է թույլ տալիս, ղեկավարն առաջ՝ հայտնաբերում և սխալները մյուս սովորողների ոգնությամբ,

և հետո՝ վերջնական յեզրակացություն է անում, վորից հետո թռուցիկ խնդիրը նորից է կրկնվում, բայց արդեն առանց սխալների:

Այս վարժությունն անցկացնելիս ղեկավարը պետք է հատուկ ուշադրություն դարձնի հակառակորդի նշման վրա, վորը վորպես կանոն, պետք է վոչ միայն հաշվի, այլև ուսանելության նպատակով պետք է պատկերացվի այլ ջոկերով, վորոնք այդ միջոցին մշակում են 3-րդ խնդիրը, կամ թե չե անց են կացնում «5-գ(վ)» վարժությունը հակընդեմ մարտի ձևով:

Վորչափ ավելի շատ անակնկալներ լինեն ընդհարման ժամանակ, այնքան ավելի ռեալ կլինեն վճիռները, և ղեկավարն այնքան ավելի շատ նյութ կունենա վերլուծման համար:

«5-գ» վարժությունը հակընդեմ մարտի ձևով անցկացնելիս ղեկավարի մշտական հոգսը պետք է լինի մի եպիզոդն անցկացնելուց հետո բացազատել ջոկերը և նրանից յուրաքանչյուրին տալ այնպիսի միջանկյալ խնդիրներ, վորոնք դրդում են՝ պարապմունքը շարունակելու համար ամենից ուսանելի վճիռներ ընդունել:

5-դ(գ) վարժության մշակումը վճռական նշանակություն ունի ջոկի հրամատարի պատրաստության մեջ: Վաշտի հրամատարի հոգսը պետք է լինի՝ այնպես կազմակերպել ուսուցումը, այնպես նշել հակառակորդին, վոր ջոկի հրամատարին այդ դրդի ինքնուրույն արագ

վճիռներ ընդունելու և հայտարերելու նախաձեռնություն և միևնույն ժամանակ ջոկի ամբողջ կազմին տա կարմիր բանակայինի համար 5-րդ խնդրի պարտականությունների կատարման պրակտիկա:

Թռուցիկ խնդիրների մի մասը լուծվում է հակազազ հագած:

5-ե(դ) Սովորքների մշակում ջոկի հրամատարի սեջ՝ ջոկում կազմակերպելու կրակի ու շարժման համագործակցությունը

Վորպես կանոն, հրաձգային դասակներն ու նրանց ջոկերը հարձակվում են վաշտի հաստոցավոր գնդացիրների ոգնությամբ, ձգտելով ըստ հնարավորին արագ և առանց կորուստների մոտենալ գրոհի համար յելման դրության:

Ջոկի հրամատարի առաջին հոգսը պիտի լինի, յերբ նա հայտարերում է հակառակորդի հաստոցավոր գնդացրերը, հաղորդել իրենց հաստոցավոր գնդացրերին ու հրետանու՝ հետևակի կապի ջոկերին թշնամու գնդացրերի տեղը՝ նրանց ճնշելու համար: Հակառակորդի դեմ հրետանու կամ հաստոցավոր գնդացրերի կողմից կրակ բանալու մոմենտը կլինի ամենից շահավետ մոմենտը՝ առաջ շարժվելու համար, սակայն սխալ կլիներ դասակի ու ջոկի հրամատարի կողմից պասիվ կերպով սպասել, մինչև վոր կճնշվեն թշնամու գնդացրերը:

Դասակի հրամատարի տրամադրության տակ կան մի քանի ջոկեր գնդացրերով ու նրառանետերի ջոկ, վորոնք կարող են իրագործել և կիրագործեն փոխադարձ ոգնությունը: Ջոկի հրամատարի ձեռքում նույնպես կա բավականաչափ հուժկու կրակային միջոց, հանձին ձեռքի գնդացրի և վոչ պակաս հուժկու միջոց հրացանը, մանավանդ՝ գերազանց հրաձիգների ձեռքում:

Հմուտ հարմարվելը տեղանքին և փոխեփոխ կրակն ու շարժումը հարևան ջոկերի միջև, իսկ ծայրահեղ դեպքում՝ մի ջոկի ձեռքի գնդացրի ու հրաձիգների միջև հնարավորություն կտա ջոկի հրամատարին շարունակելու հարձակման խնդրի կատարումը նաև առանց հաստոցավոր գնդացրերի ոգնության:

Կռվի ու շարժման համագործակցության սովորքի մշակումը ջոկում, վորն իրագործվում է փոխեփոխ ձեռքի գնդացրի ու հրաձիգների հրաձգությամբ ու շարժումով, ամենից լավ յուրացվում է տեղանքում փոքրիկ թռուցիկ խնդիրների լուծման միջոցով:

Թռուցիկների որինակներ.

Թռուցիկ խնդիր 1. «Ջոկը, հարձակվելով հաստոցավոր գնդացրերի ոգնությամբ, պատրաստվել եր անցնել բարձունքից, բայց գընդակոծվեց ու կանգնեցվեց հաստոցավոր գընդացրի կրակով մոտ 700 մետր հեռավորությունից: Մեր հաստոցավոր գնդացրերը հակառակորդին չեն տեսնում»:

Լուծում.— Ջոկի հրամատարը, տեղեկություններ հաղորդելով դասակի հրամատարին, ինքը հրամայեց ձեռքի գնդացրին ու գերազանց հրաձիգին պատրաստել լավ քողարկված դիրք, ճիշտ վորոշել հակառակորդի հաստոցավոր գնդացրի տեղը, վորոշել մին չև գնդացիրը յեղած հեռավորությունը և այն հրաձիգին, վորը դասավորված է իր ձեռքի գնդացրի կողմում հրացանով փորձնահրաձգությամբ ստուգել այդ հեռավորությունն այն կետով, վոր գտնվում է հայտարերած գնդացրի մի կողմում: Այդ ժամանակ Ջոկի հրամատարը հրամայում է ծածկված դասավորված հրաձիգներին պատրաստվել վաղեվաղ կատարելու դեպի 100 մետր առջևում գտնվող թիփուտը: Յերբ նախապատրաստական ամբողջ աշխատանքը կատարված է, Ջոկի հրամատարը հրամայում է ձեռքի գնդացրին ու գերազանց հրաձգին բանալ հանկարծակի կրակ հակառակորդի հաստոցավոր գնդացրի դեմ և հանել նրան շարքից: Ոգտագործելով հակառակորդի գնդացրի կրակի անխուսափելի թուլացումը, հրաձիգները Ջոկի հրամատարի հրամանով վազում են մի ծածկած տեղ և շարունակում են մատույցով առաջ շարժումը դեպի հակառակորդն ավելի մոտիկ: Հանկարծակի կրակ բանալով 300–400 մետր հեռավորությունից, նրանք կրկին թուլացնում են հակառակորդի կրակը և հնարավորություն են տալիս ոգտագործելու այդ մոմենտը, վորպեսզի իրենց Ջոկին միանան յետ մնացած ձեռքի գնդացրն ու գերազանց հրաձիգը: Յեթե Ջոկի հրամատարն այլ վճիռ է ընդունել՝ ղեկավարը, վերլուծմանը ներդրավելով ամբողջ խմբակին, հայտնաբերում է վճռի թույլ կողմերը և դերդում է այնպիսի վճիռ ընդունելու, վորը նրման է վերոհիշյալին:

Թռուցիկ խնդիր 2.«Ջոկը գրավել է յելման դրություն գրոհի համար, բայց գրոհի օբյեկտից 500 մետր դեպի ձախ բլրակի յետևից հակառակորդի գնդացիրը հնարավորություն չի տալիս գրոհելու հակառակորդի կրակային կետը: Վաշտերի հաստոցավոր գնդացրերը չեն տեսնում հակառակորդի թևահարող գնդացրին և չեն կարողանում ճնշել նրա կրակը»:

Լուծում. Ջոկի հրամատարը հրամայում է «ձեռքի գնդացրին ու գերազանց հրաձգին պատրաստվել վոչնչացնելու հակառակորդի գնդացրերը: Հրաձիգներին պատրաստվել իմ ազդանշանով հետևելու գրոհի»:

Պատրաստվելով, ձեռքի գնդացրերն ու գերազանց հրաձիգը հանկարծակի գնդակոծեցին հակառակորդի գնդացիրը, և կրակի պաշտպանությամբ հրաձգերը նետվեցին գրոհի ու տիրեցին հակառակորդի կրակային կետին: Հրաձիգների կրակի պաշտպանությամբ ձեռքի գնդացիրն ու գերազանց հրաձիգը միանում են իրենց Ջոկին:

Թռուցիկ խնդիրների մի մասը լուծվում է քիմհարձակման պարագայում:

5-գ(է) Սովորբների մշակում ջոկը ղեկավարելու համար գրոհում տանկերի աջակցությամբ, ինչպես նաև ծխի պաշտպանության տակ հարձակման ժամանակ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ջոկի հրամատարներին խնդիրներ առաջադրել տանկին անցք բանալու լարափակոցների մեջ և սովորքներ ձեռք բերել տանկերի համագործակցությունն իրագործելու մեջ, ցույց տալով տանկերին այնպիսի կրակային կետեր, վորոնք յենթակա յեն ճնշման, նախազգուշացնել տանկերին նրանց սպառնացող վտանգի մասին և ոգնել նրանց այդ վտանգը ճնշելու մեջ:

Այս վարժության մշակումն սկսվում է տանկերի հետ կապի ազդանշաններ սահմանելուց և ավարտվում է այդ ազդանշանների պրակտիկայով՝ մակեթների մեջ տանկերի հրամանատարության հետ հաղորդակցության համար:

Ծխի պաշտպանության տակ հարձակումը մշակվում է ծխագլանների կամ թաց ծղոտի այրելով առաջացած ծխի գործադրությամբ:

5-ը (ժ) Սովորբների մշակում վարակված տեղամասերի հաղթահարումը կազմակերպելու մեջ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել կրտսեր հրամատարներին կազմակերպել և կատարել վարակված տեղամասերի հաղթահարումը, ոգտագործելով պաշտպանության մասնագիտական ու ձեռքի տակ յեղած միջոցներ: Վարժությունն անց է կացվում դաշտում սկզբում՝ կրտսեր հրամատարների հետ, գործնականում լուծելով այն խնդիրը, թե ինչպես պետք է տարվի վարակված տեղամասի հաղթահարումը, ոգտագործելով թիկնոցներ, փրոված քներ, դրատներ և այլն, ինչպես նաև ճաղարներով՝ պայմանով, վոր վարակված տեղամասերի չափերը տարբեր են, իսկ պաշտպանության միջոցների քանակը չի փոխվում: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրա վրա, թե ինչ չափով են կրտսեր հրամատարները կարողանում նախապատրաստել ջոկը հաղթահարման համար, համապատասխան հրաման տալ, ղեկավարել ջոկի գործողությունները հաղթահարման ժամանակ: Հետագայում վարժությունը մշակվում է Կարմիր բանակայինների հետ ջոկերի կազմով, վերջին դեպքում վարակված տեղամասը նշվում է սահմանագծական նշաններով 300 մետր խորությամբ:

ԽՆԴԻՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳՐՈՀ

Նախքան խնդրի մշակումը պետք է ուսումնասիրել հետեւյալի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 74, 75, 76–78, 81, 82, 143, 684–695, 722-րդ հոդվածները և կրկնել ԿՄԾ 1·6, 47, 48, 50, 51 հոդվածները:

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը 1) Ստուգել, թե ինչ չափով է հրամատարը կարողանում՝

ա) Հաղթահարել զանազան տիպի լարափակոցները, հակագազեր հագած և առանց հակագազի.

բ) Գրոհ նախապատրաստել ոգնող կրակի դուրս կանչելու միջոցով, կազմակերպելով իր կրակը և թուլացնելով հակառակորդի նշանոցային կրակը.

գ) Կազմակերպել գրոհի նախապատրաստման ժամանակ և գրոհից հետո նշանների բաշխումը, ձեռքի գնդացրերի ու հրաձիգների միջեվ և ստուգել, թե հրաձիգները ինչ չափով են կարողանում բաշխել նշանները իրար միջև:

դ) Գրոհից առաջ և գրոհից հետո գործադրել այնպիսի շարափոխություններ, որոնք հեշտացնում են խնդրի կատարումը, միաժամանակ կրճատելով հակառակորդի կրակից առաջացող կորուստները:

ե) Գրոհի ժամանակ գործնականում իրականացնել ջոկի և տանկերի համագործակցությունը:

2) Ստուգել թե հրամատարը ինչ չափով գիտե հետեւյալի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 75, 76, 78 հոդվածները:

Կատարման կարգը: Ստուգումը, կազմակերպվում է միակողմ վարժության ձեւով, նշելով հակառակորդին: Տանկերի հետ համագործակցությունը ստուգվում է գործադրելով տանկեր, (մակեթներ), ստեղծելով 6-ե (դ) վարժության մեջ մատնանշված վարիանտներից մեկով պարագա:

Գնահատականը. «Գերազանց»՝ յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ Կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի քան 3 տուգանային աչկո:

«Լավ»—յերբ հրամատարը վստահորեն կատարում է վարժության պահանջը, ստանալով հրամատար ղեկավարից վոչ ավելի քան 2 ուղղում ,իսկ կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի քան 4 տուգանային աչկո:

«Բավարար»—յերբ հրամատարը ստանում է վոչ ավել քան 3 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի քան 5 տուգանային աչկո:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. Ա. (Ա) Սովորքների մշակում գրոհից առաջ, լարափակոցների հաղթահարման աշխատանքների կազմակերպման մեջ

Վարժության նպատակն է—սովորեցնել դիշերով՝ դրա համար նպաստավոր պարագայում՝ բանալ նշված տեղերում լարափակոցներում անցքեր և ծածուկ բերել ու լարափակոցների վերևում զցել կամրջակներ գրոհի համար:

Ժամանակակից լարափակոցները անտառանյութի, ցցերի և փշալարի փակոց չեն, ինչպիսիք կառուցվում էին իմպերիալիստական պատերազմի ժամանակ: Այդ ավելի շուտ այս ու այնտեղ զցած թակարդներ են՝ գրոհողներին բռնելու համար: Հայտարերել լարափակոցները, ահա ջոկի հրամատարի առաջին խնդիրը: Նրանց մեջ անցքեր բանալ և նկատել տանկերի բացած անցքերի տեղերը, ահա նրա 2-րդ հոդվը:

6-ա (ա) վարժության նպատակն է սովորեցնել ջոկի հրամատարին ծածկված լարափակոցները հայտարերելու և նրանց տեղերը տանկերին ցույց տալու արվեստին, բացած անցքերի տեղերը նկատելու և այդ սեփական ուժերով ու միջոցներով հաղթահարելու արվեստին այնտեղ, որտեղ այդպիսի լարափակոցներ կերեվան հանկարծակի գրոհի ժամանակ:

Վարժության մշակումն սկսվում է նրա-

նից, որ հրամատարները ծանոթանում են ժամանակակից թակարդ-լարափակոցների բնույթի հետ, որոնց թվում նաև էլեկտրականացած լարափակոցների հետ և ցույց տալ նրանց վոչնչացնելու, անվնաս դարձնելու կամ հաղթահարելու յեղանակները:

Դրանից հետո պարապմունքները տեղափոխվում են սապյորական սարքավորված հրապարակը, որտեղ դիշերով կամ թե ցերեկով, բայց գործադրելով մթնացնող ակնոցներ, կատարվում է փշալարերի անաղմուկ կտրելու աշխատանքը:

Նրանից հետո, յերբ ջոկը սովորքներ ձեռք կբերի լարափակոցների վոչնչացման և հաղթահարման տեխնիկայի մեջ, պարապմունքները տեղափոխվում են դաշտ, որտեղ նշված են լինում գրոհի առարկաները (որյեկտները) և ղեպի գրոհը շարժվելու ճանապարհների փոքրիկ տեղամասերով պատրաստված են լարափակոցներ:

Ջոկի հրամատարի խնդիրն է՝ կազմակերպել լարափակոցների հետախուզությունը և վտանելով այն, կատարել նրանց հաղթահարման ամբողջ աշխատանքը, հաշվի առնելով հակառակորդի կրակը, որ նշվում է սեմաֆորով: Վարժությունը կատարվում է այնպիսի պայմաններում, յերբ լարափակոցները «վարակված» են կայուն թունավորիչներով (վերջինս նշվում է վարժական թունավորիչ):

6–Բ (Բ): ՍովորբՆեր մշակել ջոկի հրամատարի մեջ գրոհի պատրաստության համար:

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ջոկի հրամատարին գրոհի նախապատրաստման և ոգնելու համար ոգտագործել իր ձեռքի գնդացրի ու ձեռքի նռնակների կրակը, թուլացնել հակառակորդի կրակի ուժը, գործադրելով ծուխը վորպես միջոց, վորը վերցնում է հակառակորդի գնդացրերի ու հրացանների գրոհողների նշանոցային կրակ վարելու հնարավորությունը:

Մի քանի անգամ ստեղծված ծխացումը և «Ուռռայի» ձայներն ամեն անգամ առաջացնելով հակառակորդի խափանիչ կրակ դատարկ վայրի դեմ, թուլացնում են նրա աշխատությունը, և յերբ գրոհն իրոք կատարվում է, այն ժամանակ ծուխը խանգարում է հակառակորդի գնդացրորդներին և հրաձիգներին նշանոցային կրակ վարել, և այդպիսով խիստ կրճատվում են կորուստները:

Վարժությունը հարկավոր է կատարել տեղանքում, նշելով հակառակորդին և անպայման գործադրելով ծուխ, փոխարինելով այս դեպքում ծխագլաններ կրակելը, ծղոտի խուրձեր այրելով, վորոնց վրա հող են ածում կամ չոր ծղոտի վրա լցնում են թաց ճյուղեր տերևներով:

Վարժությունը վերջնականապես մշակված կարելի յե համարել այն ժամանակ, յերբ ջոկի

հրամատարը գործնականում կյուրացնի նռնակների կրակի ու ծխի նշանակությունը գրոհին աջակցելու գործում և կկարողանա գրագետ ձևով գործադրել այդ միջոցները:

6–Գ (Վ) Ջոկի հրամատարի կողմից ջոկի շարժախություններին յուրացումը գրոհից առաջ, գրոհի ժամանակ և գրոհից հետո:

Վորպես կանոն ջոկը գրոհի համար յելման դրության մեջ ընդունում է շղթայով շարք հրաձիգների միջև 1—4 մետր միջանցներով: Գրոհի մոմենտին այդ շարքը պահպանվում է, ըստ վորում նայած գրոհի օբյեկտի լայնության, շարքը կարող է սեղմվել, բայց միջանցները մնում են վոչ պակաս քան 1—2 մետր մինչև սվինամարտի մոմենտը:

Գրոհից հետո ջոկը վայրկենապես պառկում է և անմիջապես սկսում է սողալով ավելացնել միջանցները 2–5 մետր, հարմարվելով տեղանքին՝ նոր օբյեկտի դեմ գրոհը շարունակելու համար:

Գրոհի մոմենտին ջոկի հրամատարի հիմնական հոգսն է հանդիսանում թույլ չտալ, վոր ջոկի մարտիկները կուտակվեն, գրոհից հետո անմիջապես վերացնել կուտակումը, յեթե նա դոյանում է սվինով հարվածի ժամանակ:

Վարժությունը կրկնվում է հակազդ հաղած:

1843 – III

6–Գ (Գ)։ Մարզանք գնդացրերի ու հրաձիգների միջև ինչպես նաև վերջիններիս կողմից միմյանց միջև նշանների բաշխման մեջ։ Կրակ վարելը գրոհից առաջ։

Վարժության նպատակն է՝ հրամատարի մեջ սովորություն մշակել միշտ կրակային խնդիրը առաջադրելու գնդացրին, իսկ հրաձիգների համար այս վարժությունը մարզանք կհանդիսանա տեղանքին հարմարվելու և քողարկելու մեջ ամենամոտիկ տարածություններում և կրակը միմյանց միջև բաշխելու մեջ այնպես, որ 5 գնդակով չհարվածվի մի հակառակորդ, մինչդեռ թշնամու 5 մարդը մնում են առանց հարվածվելու։ Այս վարժությունը մշակելու համար, պահանջվում է անպայման նշել գրոհի օբյեկտները թիրախներով, ամեն անգամ հակառակորդի յենթադրվող գնդացրերի ու հրաձիգների քանակով, (թիրախներն են քաթան՝ քաշած յերկաթալարի չրջանակի վրա), այնպես, որ կարմիր բանակայինը հրահանն իջեցնի խնամքով նշան բռնելով և վոչ թե իզուր չխշխկացնելով, ինչպես այդ հաճախ արվում է տակտիկական պարապմունքներում։

6–Ե (Դ)։ Սովորքներ մշակել ջոկի հրամատարների մեջ համագործակցություն մշակելու հետևակի ու տանկերի միատեղ գրոհի ժամանակ։

Վարժության նպատակն է՝ մշակել ջոկի

հրամատարի հետ տանկերի համագործակցության մի շարք ամենից բնորոշ դեպքեր, հատուկ ուշադրություն դարձնելով վատ տեսնող ու խուլ տանկերի հետ, կապի իրագործման մեջ սովորքների յուրացման վրա։

Առանձնապես խնամքով պետք է մշակել հետեվակի հեռավորության հարցը գրոհող տանկերից։

Այս հարցում կարող է լինել յերկու հիմնական վարիանտ։

1։ *Տանկերը գտնվում են հակառակորդից այնպիսի հեռավորությամբ, վոր հակառակորդին հնարավորություն են տալիս բանալու հրետանական խափանիչ կրակ, յերբ հայտնաբերվում է, վոր տանկերը գրոհի յեն շարժվում։ Այս դեպքում հետեվակը, վոր գալիս է տանկերի հետևից 100–200 մետր հեռավորության վրա, կենթարկվի այն արկերի հարվածմանը, վորոնք ուղղված են տանկերի դեմ։ Ուստի և հետևակին հանձնարարվում է չմոտենալ տանկերին 200 մետրից ավելի, մինչև վոր նրանք դուրս չեն գա հրետանական դնդակոծի շերտից։*

2։ *Տանկերն ու հետեվակը գտնվում են հակառակորդին այնքան մոտիկ, վոր նրա հրետանին չի կարող բանալ ու վարել տանկերի դեմ խափանիչ կրակ։ Այս դեպքում տանկերի դեմ կկրակեն հրանոթներն ու գնդացրերը, ուղիղ նշանառությամբ, վորի հետեվանքով հետեվակը կարող է մնալ տանկերի հետ մի հավա-*

սարության վրա, սակայն չմոտենալով նրանց ըստ ճակատի 10–20 մետրից ավելի, վորպեսզի ազատորեն տանկի դեմ ուղղած արկերը, նրանց բեկորները (կտորտանքը) և գնդակները չհարվածեն հետևակին:

Վերջին վարիանտն իր հերթին կարող է տալ երկու դեպք.

1. Հակառակորդի հրետանին խափանիչ կրակ չի վարում, բայց տեղանքը բաց է, հակառակորդի դիրքը պատած է լարափակոցներով և հակառակորդի պաշտպանության առաջին յեզրի գնդացրերի կրակը հնարավորություն չի տալիս հետևակին գրոհի գնալու տանկերի հետ միատեղ: Այս դեպքում հետեվակը կանգ է առնում մինչև վոր հետևակի անմիջական ոգնության տանկերը (ՀՍՈՏ) անցքեր կբանան լարափակոցում և կքայքայեն գնդացրերի կրակը: Ոգտագործելով այդ մոմենտը, հետևակը նետվում է գրոհի և նորից վերականգնում է իր ավելի մոտ համագործակցությունը տանկերի հետ:

2. Հակառակորդի հրետանին խափանիչ կրակ չի վարում— տեղանքը կտրտուկ է, կան ծածկված մատույցներ: Այդպիսի դեպքում հետևակը կարող է հետեվել անմիջապես տանկերի յետևից, իսկ լարափակոցը հաղթահարելուց հետո նաև նրանց առջևից, ավելի լրիվ չափով իրականացնելով կապն ու փոխադարձ ոգնությունը:

Վարժությունը մշակվում է թռուցիկ խնդիր

ներ լուծելու միջոցով, սկզբում մինիատյուրպոլիգոնում ջոկերի ու տանկերի մոդելներով, յուրացնելու համար անհրաժեշտ դիտելիքները, իսկ այնուհետև ամրացվում է դաշտում տեղի ունեցած պարապմունքներում, նշելով արագընթաց տանկերը ավտոմոբիլներով կամ ձիավորով («տանկային խալաթով»):

Թռուցիկ խնդիրների օրինակներ:

Թռուցիկ խնդիր 1. «Ջոկը գտնվում է հակառակորդի դիրքերից մոտ 300 մետրի վրա: Տանկերը (մակետները) հայտնվում են թիկունքից, անցնում են ջոկի դասավորության միջով և գնում են հակառակորդի կողմ: Հակառակորդի հրետանին խափանիչ կրակ է վարում: Գործեցե՛ք»:

Լուծում: Ջոկը, ծածկվելով տեղանքի ծալքերում արկերի կտորների հարվածումից պաշտպանվելու համար, սպասում է, մինչև վոր տանկերը կանցնեն մի 100–200 մետր առաջ, վորից հետո ջոկը վոտքի յե կանգնում և արագացրած քայլով, իսկ տեղ-տեղ նաև վազեվազքով, գնում է դեպի գրոհ:

Թռուցիկ խնդիր 2. (1-ին խնդրի պարագայի շարունակությունը) «Տանկերը առաջ են անցել, բայց հրետանու խափանիչ կրակը չի դադարում, նպատակ ունենալով կտրել գրոհող հետևակին տանկերից: Գործեցե՛ք»:

Լուծում: Ոգտագործելով տանկերի կողմից քայքայված գնդացրային կրակի թուլացումը, ջոկի հրամատարը ջոկին առաջադրում

և գրոհի, հաղթահարելով խափանիչ կրակի շերտը, վորի համար ոգտագործում է այն մոմենտները, վորը լինում են անմիջապես արկերի պայթյունից հետո՝ նետվելու համար արկի մի ճաղարից մյուս ճաղարը:

Թռուցիկ խնդիր 3: «Գրոհի համար յելման դրությունը գտնվում է հակառակորդից 100 մետրի վրա, տեղանքը բաց է, տանկերը (մակետները) գրոհի գնացին: Հարեվան ջոկերը չարժվել են գրոհի: Հաստոցավոր գնդացրի կրակը խանգարում է ջոկին գրոհի չարժվել: Գործեցե՛ք»:

Լուծում: Ջոկը՝ թաղնվում է այնքան ժամանակ, մինչև վոր տանկերը կթուլացնեն գնդացրի կրակը, միաժամանակ ջոկի հրամատարը, ոգտվելով պայմանական նշաններից, ամենամոտ տանկին ցույց է տալիս հակառակորդի այն գնդացրի տեղը, վորը խանգարում է ջոկի առաջ չարժմանը:

Թռուցիկ խնդիր 4: Ջոկը գրոհի յե գնում տանկերի յետևից: Հակառակորդի կրակը (պատկերացվում է պայթող ծրարներով), չարքից հանում է յերկու տանկ: Գործեցե՛ք»:

Լուծում: Ջոկի հրամատարը չարունակում է գրոհը՝ ընտրելով չարժման համար ավելի ծածկված ճանապարհ:

Թռուցիկ խնդիր 5: «Տանկերը չարքերից հանել են պաշտպանության առջևի յեզրի հակառակորդի կրակային կետերը և յետ են քաշվում հավաքատեղը: Ջոկը կրակել է հակառակորդի կետերից մեկը: Գործեցե՛ք»:

Լուծում: Ջոկը, տեղավորվելով գրաված խրամատի ռայոնում, վորոշում է նոր օբյեկտներ գրոհը չարունակելու համար: Առաջարկ կա յետ քաշվել տանկերի յետևից: Ղեկավարը, դատապարտելով այդ առաջարկը, բացատրում է, վոր տանկերի յետ քաշվելը, նրանց կողմից առաջին խնդիրը կատարելուց հետո, անհրաժեշտ է հետագա գործողությունները ճշտելու համար: Հետևակի խնդիրն է այս դեպքում իր դասավորությամբ պաշտպանել՝ տանկերին, կապ հաստատել նրանց հետ և պատրաստվել գրոհը չարունակելու համար:

Նման թռուցիկ խնդիրներով հրամատար ղեկավարը ամրացնում է հրամատարների ունակությունները տանկերի հետ ամենաբազմազան պարագայում համագործակցության իրականացման մեջ:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ բոլոր հրամատարները միանգամայն կյուրացնեն հետեվակի անմիջական ոգնության տանկերի գործողության տակտիկան և տանկերի ու հետևակի համագործակցության խնդիրը:

6. Զ (ե). Սովորքների մշակում գիշերով գրոհ կատարելու համար:

Վարժության նպատակն է մշակել 6 ա(ա),

6 բ (բ), 6 գ (գ) վարժությունները գիշերվա պարապմունքում, հատուկ ուշադրություն դարձնելով գրոհի շարժման ժամանակ ուղղությունը պահպանելու և հարեվանների հետ կապ պահելու վրա:

Մշակումն ավարտվում է գիշերային գրոհի քննական վարժությամբ:

Վարժության նպատակն է՝ ստուգել թե ինչ չափով է ջոկի հրամատարը կարողանում:

ա) Կազմակերպել և աշխատանք տանել գիշերով լարափակոցների հաղթահարման վերաբերյալ.

բ) Գործադրել գրոհից առաջ, գրոհի ժամանակ և գրոհից հետո այնպիսի շարժումներ, որոնք առավելագույն չափով հնարավորություն են տալիս իրագործելու կապը և հրաձիգների փոխադարձ ոգնությունը (միջանցները կրճատվում են մինչև 1 մետր).

գ) Հաջող գրոհից հետո ջոկը կարդի բերել, պատրաստել նրան՝ հակագրոհը յետ մղելու համար, վերականգնել կապը (լուսազդանշանները) հարեվանների հետ և նշել գրոհի նոր ոբյեկտը:

Կատարման կարգը: Կատարման ստուգումը կազմակերպվում է խմբակային պարապմունքի ձևով, սկզբում միայն հրամատարների և ապա նաև Կարմիր բանակայինների կողմից, որպես միակողմ ուսուցում, նշելով հակառակորդին և լարափակոցը թեկուզ և մի ցցով: Հատուկ ուշադրություն դարձնել հարեվանների հետ լուսազդանշանային կապի կազմակերպման վրա: Գրոհի նոր ոբյեկտներ նշելու մեջ պրակտիկայի համար հակառակորդի դիրքի խորությունը նշվում է լուսային բռնկումներով, որոնք ձեվացնում են գնդացրերի կրակը, կամ նշվում է անգնդակ փամփուշտներով գնդացրերի կրակով:

Գնահատականը– «գերազանց», յերբ ջոկի հրամատարը վստահորեն կատարում է վարժությունը, իսկ Կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի քան 3 տուգանային աչկո:

«Լավ»՝ յերբ ջոկի հրամատարն ստանում է վոչ ավելի քան մեկ ուղղում, իսկ կարմիր բանակայինները վոչ ավելի քան 4 տուգանային աչկո:

«Բավարար», յերբ ջոկի հրամատարը ստանում է վոչ ավելին քան 2 ուղղում, իսկ կարմիր բանակայինները վոչ ավելի քան 5 տուգանային աչկո:

ԽՆԴԻՐ ՅՈԹՆԵՐՈՐԴ

ՋՈԿԻ ԿՌԻՎԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՇԵՐՏԻ ՆԵՐՍՈՒՄ

Նախ քան խնդրի մշակումը և նրա հետ զուգընթաց պետք է կրկնել հետևակի մարտական կանոնադրքի յերկրորդ մասի 84, 90–96 հոդվածները և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգի» անհրաժեշտ հոդվածները:

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակն է. 1) *Ստուգել հրամատարին, թե ինչ չափով է նա կարողանում.*

ա) սարքավորել գրված տեղանքը՝ յետ մղելու համար հակագրոհը (ջոկի աշխատանքի համար ժամանակն է 1 ժամ).

բ) ղեկավարել ջոկը հակագրոհը յետ մղելու ժամանակ, հատուկ ուշադրություն դարձնել նշանների գնահատման, հարվածելու համար նրանց ընտրության, գնդացրին ու հրաձիգներին կրակային խնդիրներ առաջադրելու վրա.

գ) կազմակերպել արագ առաջշարժումը դեպի հակառակորդի դասավորության խորքը՝ զարգացնելու համար գրոհը.

դ) հաղթահարել թն վարակումները.

2) *Ստուգել հրամատարին, թե ինչ չափով նա գիտե հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասի 84, 91, 92, 93, 95, 96-րդ հոդվածները և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգի» անհրաժեշտ հոդվածները:*

Կատարման կարգը.— *Քննական վարժությունն անց է կացվում միակողմ պարապմունքի ձևով, վորպես գրոհի շարունակությունը, ունենալով նշված հակառակորդ ու վարակված տարածություններ, վորոնք հնարավորություն են տալիս գործնականում ստուգելու քննական վարժության խնդիրները:*

Գնահատական. «Գերազանց», *յերբ հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ Կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 3 տուգանային աչկո.*

«Լավ», *յերբ հրամատարը վստահորեն կատարում է պահանջները, ստանալով հրամատար-ղեկավարից վոչ ավելի քան 2 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 5 տուգանային աչկո.*

«Բավարար», *յերբ հրամատարը ստանում է վոչ ավելի քան 3 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 6 տուգանային աչկո:*

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7-ա (ա). Հակառակորդից գրված կետի ոգտագործումը հակագրոհը յետ մղելու համար

Հակառակորդի խրամատները կարող են ծածկարան ծառայել հակառակորդի արկերի բեկորներից ու գնդակներից, յերբ հակառակորդը պատրաստվում է հակագրոհի:

Սակայն այդ խրամատների տեղն ընտրված է այնպիսի հաշվով, վոր նրանցից կրակ վարեն այլ ուղղությամբ, և համարյա, վորպես կանոն, այդ տեղը հնարավորություն չի տա ոգտագործելու այդ խրամատները դեպի հակառակորդի կողմը կրակ վարելու համար: Բացի դրանից, խրամատի տեղը ճիշտ հայտնի յե, և նախապատրաստելով գրոհը, հակառակորդը

մինչև անդամ գիշերով կարող է անսխալ ուղղել հրետանու և գնդացրերի կրակն այդ կետի վրա: Դրանից էլ յելնելով, վարժության մշակումը նպատակ ունի ջոկի հրամատարին ճարտարության տալ՝ արագ գնահատելու դրված տեղանքը և տեղ ընտրելու ջոկի դասավորման համար, յելնելով դեպի հակառակորդը տեսածի ու գնդակոծի, նրա տեսողությունից ու կրակից պաշտպանող ծածկարանի դոյությունից: Բացի դրանից, ջոկի հրամատարը պետք է ճարտարություն ձեռք բերի արագ կառուցելու նոր խրամատներ և ոգտագործելու հակառակորդի տեղափոխվող լարափակոցները՝ դեպի նրա կողմը լարափակոցներ կառուցելու համար, յեթե ջոկը խնդրի պայմաններով կանգ առնի այդ կետում՝ թեկուզ մի ժամ ժամանակով:

Վարժությունն անց է կացվում համապատասխան ձևով սարքավորված տեղանքում (կարելի յե նաև սապյորական սարքավորված հրապարակում) գործնական մշակման ձևով, հատուկ ուշադրություն դարձնելով նրա վրա, թե ինչ չափով են կարողանում ոգտագործել տեղանքը կրակի ու քողարկման համար:

7–բ (բ) Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ ջոկը դեկավարելու համար հակառակորդի հակագրոհը յետ մղելու ժամանակ

Վարժության նպատակն է՝ մշակել պաշտպանության հարցեր 3–րդ խնդրի քննական

վարժության համեմատ, հատուկ ուշադրություն դարձնելով նշանների գնահատման, գնդացրին ու հրաձիգներին կրակային խնդիրներ առաջադրելու և շրջապատման մեջ կռվելու պատրաստակամության վրա:

7–գ (վ) Սովորքների մշակում նոր ոբյեկտների հայտաբերման մեջ շարունակելու համար գրոհը դասակին ցույց տված ուղղությամբ

Վարժության նպատակն է՝ հիմնականում ջոկի հրամատարի մեջ սովորքներ մշակել՝ անընդհատ դիտողություն վարելու անձամբ և դիտողի ոգնությամբ:

Մի կետի վրա գրոհելու պրոցեսում հակառակորդի հարևան կրակային կետը թևի վրա կամ խորքում, դերազանցապես քողարկված լինելով, հայտաբերում է իրեն անգնդակ փամփուշտներով հրաձգությամբ: Հենց վոր գրոհը վերջանում է, հրաձգությունը դադարում է:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ ջոկի հրամատարը կամ ինքն է հայտաբերում հակառակորդի նոր կետը, կամ կարողանում է տեղեկություն ստանալ իր դիտողից, գնդացրորդից կամ ջոկի վորևե կարմիր բանակայինից:

7–դ (գ) Սովորքների մշակում գրոհի սրընթաց շարունակման մեջ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ջոկի Կարմիր բանակայիններին պարագան

գնահատելու, հարևանների գործողությունները հաշվի առնելու և հարևանների հետ համագործակցությամբ գրոհը շարունակելու հմտությունը:

Վարժությունն անց է կացվում մի շարք թռուցիկ խնդիրների ձևով, մոտավորապես այսպես.

Թռուցիկ խնդիր 1. «Գրոհը հաջողվել է: Գրավված են գնդացիր ու մի քանի գերիներ: Չհնձած արտի յուրաքանչյուր բարձունքից, որտեղ գտնվում են մեր հարձակման ճանապարհին 200 մետր հեռավորության վրա գնդացիրը կրակ է վարում ջոկի դեմ: Հարևան ջոկն ուղևորվում է դեպի այդ բարձունքը, շրջանցելով ձախից: Գործեցե՛ք»:

Լուծում. Զեռքի գնդացիրը կրակ է բացում հակառակորդի գնդացրի դեմ, իսկ հրաձիգները արագ առաջ են շարժվում չհնձած արտով, աջից շրջանցելով գնդացիրը, որպեսզի մինչև վերջին մոմենտը հնարավորություն տան ձեռքի գնդացրին կրակ վարել:

7–ե(դ) Սովորեցնել մշակում վարակված տեղամասի հանդիպելիս գործելու մեջ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ջոկերի հրամատարներին գործել այն դեպքում, երբ հանդիպում են թույն վարակված փոքր տեղամասերի և երբ հանդիպում են վարակված մեծ տեղամասերի:

Վարժությունն անց է կացվում միակողմ

պարապմունքի ձևով, անպայման վարակելով տեղանքը վարժական թույն:

Մշակումը ամրացվում է թռուցիկ խնդիրների լուծումով:

Թռուցիկ խնդիր 1. «Ջոկը դասակի կազմով, զարգացնելով հարձակումը դեպի հակառակորդի դիրքի խորքը, դեմ է առել արկերից առաջացած ճագարի, որից կայուն թույն հոտ է գալիս, պաշտպանության միջոցներ չկան»:

Լուծում. Շարունակել հարձակումը բացատրված շարքով, խնամքով շրջանցելով արկերից առաջացած ճագարները, շարժվելով նրանցից 10 մետրից վոչ մոտ՝ հողմաբեր կողմից: Առաջարկություն կա հագնել հակագազերը և առանց ժամանակ կորցնելու, շարժվել ուղիղ ճանապարհով: Վերլուծման ժամանակ հրամատարը բացատրում է, որ չնայած հակագազի պաշտպանության, սխալ կլիներ ուղիղ ճանապարհով գնալ, որովհետև կայուն թույն վարակվելու վտանգ կա: Ավելի լավ է շրջացնել, յեթե այդ չի առաջացնում ժամանակի այնպիսի կորուստ, որը չի լրացվում առանց հակագազերի արագացրած շարժումով:

Թռուցիկ խնդիր 2. «Շարունակելով առաջ շարժվել, ջոկը մոտեցավ ձորակին և տեսնում է, ինչպես ձորակից դուրս վազեցին հակառակորդի մի քանի զինվոր և անցան մոտակա անտառը, հագած ունենալով հակագազեր ու

պաշտպանական հագուստ, մեջքներին կրելով վարակման համար գործիքներ:

Զորակում զգացվում է կայուն թն առկայությունը»:

Լուծում. Հագնել հակագազերը, պաշտպանել վոտքերը և անցնել ճորակը և այլն:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ ջոկի հրամատարը յուրացնում է թն հետ հանկարծակի հանդիպումների վտանգը և վարժվում է արագ նպատակահարմար վճիռներ ընդունել նրանցից պաշտպանվելու համար՝ առանց կորցնելու հարձակման տեմպը:

Վարժված տեղամասերի հաղթահարման մի շարք թռուցիկ խնդիրներ պետք է լուծվեն հակառակորդի ուժեղ կրակի տակ, ոգտագործելով մաշկի պաշտպանության սահմանափակ միջոցներ:

7-ը(ե). Սովորքների մշակում գիշերով գրոհը զարգացնելու մեջ:

Վարժության հիմնական նպատակն է հանդիսանում մշակել սովորքներ՝ և գրոհի ցույց տված ուղղությունը պահպանելու և իր գտնված տեղի նկատմամբ հարևանների ու հակառակորդի տեղի կողմորոշման մեջ:

Վարժությունն անց է կացվում գիշերով խմբակային պարապմունքի ձևով, անպայման նշելով հարևաններին ու հակառակորդին (հարևանները կարող են լինել հրամատարներ նույնպիսի խմբակներ, վորոնք ոգտագործում են նույն ժամանակը տեղն ու պարագան տվյալ վարժությունը մշակելու համար):

Վարժության մշակումն ավարտվում է քննական վարժությամբ՝ գիշերով զարգացնելու համար գրոհը հակառակորդի դասավորության խորքում:

Նպատակը. Ստուգել թե ջոկի հրամատարն ինչ չափով է կարողանում.

ա) պահպանել շարժման ուղղությունը կողմնացույցով, նորից վերականգնելով այդ ուղղությունը, հերթական միջանկյալ այնպիսի խնդրի լուծումից հետո, վորը չեղում է տրված ուղղությունից:

բ) վորոշել յուրաքանչյուր բոպե իր գրանվելու տեղը կողմացույցի ոգնությամբ և հաշվելով անցած քայլերը յերման դրությունից կամ լավ հայտնի ու քարտեզի վրա նշված կողմորոշից:

գ) Հետևել հարևանների առաջ շարժմանը, վերահսկելով նրան գտնվելու տեղի վրա, կողական լուսազդանշանային կապի միջոցով և ստուգելով կապավորներ ուղարկելու միջոցով:

Կատարման կարգը: Ստուգումը կատարվում է յերեք ջոկի հարձակման ձևով՝ 100-200 մետր միջանցներով, մինչև 1 կմ. խորությամբ, անծանոթ տեղանքում:

Գնահատականը. «Գերազանց», յերբ հրամատարը վստահորեն կատարում է հարևանները

բի հետ կապի իր աշխատանքը, և նրա սխալներն ուղղության նկատմամբ չեն գերազանցում 20 հազարերորդականից, իսկ հեռավորությամբ ավելի չեն քան յելման գրությունից հեռավորության 1/20 մասը:

«Լավ», յերբ հրամատարը սիստեմատիկաբար կապ է պահել մի հարևանի հետ և ժամանակավորապես կորցրել է կապը մյուս հարևաններից վոչ ավելի քան 2 անգամ, բայց կարողացել է վերականգնել այդ կապը, իսկ ուղղության սխալներն ավելի չեն, քան հեռավորության 50 հազարերորդականը, իսկ հեռավորությամբ ավելի չեն յելման կետից 1/10 հեռավորությունից:

«Բավարար», յերբ հրամատարը նոր օբյեկտի գրոհի մոմենտին կարողացել է վերականգնել կապը հարևանների հետ, թեկուզ և մինչև այդ նա քանիցս կորցրած լինի այդ կապը. յերբ ուղղության սխալն ավելի չէ 90 հազարերորդականից, իսկ հեռավորությամբ ավելի չէ քան յելման կետի հեռավորության 1/7-ը:

Ծանոթություն.—1. Հեռավորության նկատմամբ սխալները ստուգում են այն գրոհի մոմենտին, յերբ մոտենում են գրոհի օբյեկտին, հարցաքննելով յուրաքանչյուր հրամատարին, թե ինչ հեռավորության վրա յե նա գտնվում յելման գրությունից: Ղեկավարին հայտնի իսկական հեռավորության հետ յեղած տարբերությունը ցույց կտա սխալի չափը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ուղղության նկատմամբ սխալը վորոշվում է յելման գրությունից գրոհի օբյեկտը գծից այն կետի չեղման վորոշումով, վորտեղ հարձակվողը գտնվում է՝ «գրոհի պատրաստվել» ազդանշան տալու մոմենտին. գրոհի օբյեկտը հայտաբերում է իրեն ղեկավարի ազդանշանով նրանից հետո, յերբ կհայտնաբերվի յուրաքանչյուր ջոկի գտնվելու տեղը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Այս պարապմունքի անցկացումը հնարավոր է նաև ցերեկով՝ գործադրելով մթնացնող ակնոցներ, վորպիսի ակնոցներ չի հագնում միայն կողմնացույցով շարժվողը:

Այս դեպքում գրոհի օբյեկտը պետք է մի անգամայն աննկատելի լինի (թուփ, հողակույտ և այլն):

ԽՆԴԻՐ ՈՒՔԵՐՈՐԴ

ԴԻՄԱՄԱՐՏ

Այն շրջանում, յերբ վաշտերի ու գումարտակների հրամատարները, մշակում են դիմամարտի խնդիրները, կրտսեր հրամատարները կրկնում են պաշտպանության ու հարձակման խնդիրներ:

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՈՒՄԸ

Նախ քան խնդրի մշակումը, ջոկերի հրամատարները կրկնում են հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասի 283, 291–293 հոդվածները. կմծ 3, 6, 54–68 հոդվածները, «կարմիր բանակի ռազմաքիմիական պաշտպանության կազմակերպումն ու մեթոդիկան» 5–15-րդ հրահանգները և «Հակաքիմիական պաշտպանության հրահանգի» համապատասխան հոդվածները:

ԳՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը.—1) ստուգել, թե ինչ չափով է հրամատարը կարողանում.

ա) նշել դիտակալների համար դիտակետեր և հետախուզական ջոկի կորիզի շարժման ուղին քարտեզով՝ ճշտելով այն տեղանքում:

բ) կազմակերպել հետախուզական ջոկի կորիզի կապը դիտակալների ու հետախուզական դասակի կորիզի հետ.

գ) վորոշել ձիղերի ձայնով ու բռնուկումներով (բոցով) կրակողի տեղն ու մինչև կրակողը յեղած հեռավորությունը.

դ) կազմակերպել հետախուզական ջոկի շարժումն անծանոթ կամ սակավ ծանոթ տեղանքում դեպի քարտեզով ցույց աված տեղը, ինքնուրույն վորոշելով շարժման ազիմուտը և ապա առանց քարտեզի, ազիմուտով մոտենալ այդ կետին հետախուզական ջոկի հետ միասին.

ե) կազմակերպել վարակված տեղամասի քիմհետախուզությունն ինքնուրույն և ջոկի հետ միասին, ջոկին տրված քիմիկների ոգնությամբ.

զ) կազմակերպել գետի հետախուզությունը:

է) կազմակերպել անտառի հետախուզությունը:

ը) կազմակերպել ճանապարհների հետախուզությունը:

թ) կազմակերպել բնակավայրերի հետախուզությունը:

ժ) կազմակերպել գերիների բռնելը:

ժա) Գրել անփոփ զեկուցագիր հետախուզության արդյունքների մասին, մտցնելով նրա մեջ 4 միջանկյալ խնդրի վերաբերյալ տեղեկություններ, վոր ստացել է դիտակալների միջոցով:

2) Ստուգել, թե հրամատարն ինչ չափով գիտե հետևակի մարտական կանոնագրքի 2-րդ մասի 291–293 հոդվածները և կՄԾ 54 68 հոդվածները:

Կատարման կարգը. Ստուգումն անց է կացվում 3–4 կիլոմետր հեռավորության վրա շարժման ժամանակ հետախուզական ջոկի խնդիրների կատարման ձևով միջանկյալ խնդիրների հետ միասին, վոր տալիս է զեկավարը՝ նշված և զանազան տեղերում հանկար-

ծակի հայտնվող հակառակորդի միջոցով։ Հրաձգությունը ցույց է տրվում 500–700 մետր հեռավորության վրա (անգնդակ ձիգեր)։

«ե» «ժ» կետերի վերաբերյալ.—

Յուրաքանչյուր ստուգվող ջոկ իր հրամատարի հետ միասին խնդիր է ստանում ըստ յուրաքանչյուր կետի բովանդակության առանձին։ Կատարելով առաջին խնդիրը, անցնում են յերկրորդ խնդրի կատարմանը և այլն։ Գերիների բռնելը կազմակերպվում է համաձայն այն ցուցումների, որ տրված են դ–թ նախապատրաստական վարժության մեջ այն պայմանով, որ հակառակորդի պահպանության մեջ պոստերի թիվն ավելացրած է մինչև 6–ի։ Վորպեսզի ջոկերը չխանգարեն միմյանց աշխատանք նրանցից յուրաքանչյուրին տրվում է իր ուղղությունը։

Գնահատականը. «գերազանց», յերբ հրամատարը վստահորեն կատարել է քննական վարժության բոլոր պահանջները, ստանալով վոչ ավելի քան 3–ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 3 տուգանային աշկո.

«Լավ», յերբ հրամատարը վստահորեն կատարել է վարժության պահանջները, ստանալով հարմատար—ղեկավարից վոչ ավելի քան 3 ուղղում, իսկ կարմիր բանակայինները վոչ ավելի քան 4 տուգանային աշկո։

«Բավարար», յերբ հրամատարը ստացել

է վոչ ավելի քան 5 ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 5 տուգանային աշկո։

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9–ա(ա) ՍովորբՆերի մշակում մի շարք դիտակետերի և հետախուզական ջոկի կորիզի շարժման ուղիների ընտրության մեջ. զուգընթաց մշակելով հետախուզական ջոկի կորիզի դիտակալների շարժման տեխնիկան

Վարժության նպատակն է՝ գործնականում մշակել կմծ 56, 57, 61, 62–րդ հոդվածները, ավելացնելով հետախուզական ջոկի կորիզի ու դիտակալների շարժման տեխնիկայի ուսումնասիրությունը։

Վարժությունը մշակվում է՝ կարմիր բանակայինների համար 9–ա վարժության պատրաստման մեթոդով, հաշվի առնելով այն, վոր հետախուզական ջոկի շարժման ուղին դժվար է, քան թե յերկու դիտակալների ուղին նշելը և այն, վոր հետախուզության մեջ դիտակալների դիտակետերն անպայման չպետք է լինեն այն ճանապարհի վրա, վոր նշված է հետախուզության ջոկի կորիզի շարժման համար, այլ կարող են ընտրվել նաև այդ ճանապարհի մի կողմի վրա։

9–բ(բ) Սովորբների մշակում հետախուզական ջոկի կորիզի կապի կազմակերպման մեջ՝ իր կողմից ուղարկած դիտակալների և հետախուզական դասակի կորիզի հետ

Վարժության նպատակն է՝ *տիրապետել կապի տեխնիկային հնչունական ու տեսողական կապի ոգնությամբ և ձեռք բերած տեխնիկան սովորքների գործադրության բազմազան պարագայում. տեղանքում, հակառակորդից հեռու գտնվելու դեպքում և այլ դեպքում:*

Վարժության մշակումն սկզբում անց է կացվում գործնական միջոցով կարմիր բանակային ու հրամատարական պարապմունքներում դասարանում, իսկ հետո տեղափոխվում է դաշտ իսկական տարածությունների վրա: Ուսումնասիրությունն ավարտվում է՝ զանազան պարագաններում կապի վերաբերյալ թռուցիկ խնդիրների լուծման ձևով:

Տեսողական պայմանական ազդանշանները կարող են տրվել ձեռքով, գլխարկով, հրացանով. հնչունական ազդանշանները՝ ազդակի ձայնով, զորտերի կրկռոցով, չան հաջոցով և այլն:

Հակառակորդի քանակը կարող է նշվել կրկնվող ազդանշանի քանակով: Որինակ՝ դեպի կողքերը մեկնած ձեռքերը նշանակում են զորասյուն, ձեռքի հինգ անգամ իջեցումն

ու բարձրացումը նշանակում է 1/2 կիլոմետր յերկարությամբ զորասյուն:

9գ(վ) Սովորբների մշակում հակառակորդի տեղը վորոշելու մեջ՝ ձիգերի բռնուկմանեներով ու ձիգերի ձայնով և գնդակների սուլոցով և հակառակորդի հեռավորությունը ձիգի բռնկման մոմենտից մինչև ձիգի ձայնը լսվելու մոմենտն անցած ժամանակով

Վարժության նպատակն է՝ *ընդարձակել ջոկի հրամատարի սովորքները՝ ռազմական այն նշանների յուրացման բնագավառում, վոր մեկնաբանված են կմծ 59–րդ հոդվածում:*

Վարժությունը սկզբում անց է կացվում ցուցադրական պարապմունքի ձևով, վորտեղ հրաձգության ժամանակ հրացանների ու գնդացրերի բռնկումները դիտում են տարբեր հեռավորություններից, սկզբում՝ կողքից դիտողները և ապա՝ ճակատային դիտողությամբ չրջադիտակի (պերիսկոպի) ոգնությամբ:

Բռնկումների ցուցադրանքից հետո ուշադրություն են հրավիրում ձիգերի ձայնի վրա, վոր տեղի յե ունենում տարբեր հեռավորությունից, յերբ հետախույզ դիտողը պառկել է ուղիղ կրակողի դեմ, կամ պառկել է կողքից:

Ցուցադրական պարապմունքն ավարտվում է նրանով, վոր բացատրվում է գնդակների սուլոցի տարբերությունը, յերբ նրանք թռչում են բարձր կամ ցածր, գլխի վրայով կամ

կողքից և ցույց է տրվում ձիգի ձայնի ու բրդան կման միջոցով հեռավորությունը վորոշելու պարզ յեղանակը:

Ստացված տեղեկություններն ամրացվում են պրակտիկայով հրաձգավայրում, վորտեղ ու շաղիր հետախույզ-դիտողը հսկայական փորձ կստանա ձայների ադրյուրի և այն վայրի վորոշման մեջ, վորտեղից դալիս են այդ ձայները, ձայնով ղենքի տեսակը վորոշելու մեջ, դնդակի սուլոցի բնույթով վտանդի աստիճանը վորոշելու մեջ:

Ձեռք բերած սովորքների ստուգում կարող է ծառայել հատուկ պարապմունքն այնպիսի առաջադրությամբ, վորը պրակտիկա յե տալիս բոլոր այդ ճարտարությունների դոր ծադրության մեջ:

9–դ(գ) Սովորքների մշակումը քարտեզի ու կողմնացույցի ոգնությամբ կողմորոշվելու մեջ

Վարժության նպատակն է՝ սովորեցնել կրտսեր հրամատարին քարտեզով կամ կողմնացույցով վորոշել շարժման ազիմուտը դեպի մի վորոշ առարկա, վորը չի յերևում կանգնած տեղից և շարժվել ազիմուտով. սովորեցնել գտնել քարտեզի վրա տեղանքում յեղած առարկաները և, ընդհակառակը՝ տեղանքում գտնել այն կետը կամ առարկան, վոր պատկերացված է քարտեզի վրա. սովորեցնել կարդալ

քարտեզները և կարողանալ վորոշել հեռավորությունը քարտեզով:

Վարժությունը սկզբում կարելի յե անցկացնել մինիատյուր-պոլիգոնում, անցկացնելով նրա վրա ռելյեֆը քարտեզից: Ե՛լ ավելի լավ է մշակումը միանգամից սկսել դաշտում այն տեղանքում, վորը պատկերացված է քարտեզի վրա:

9–ե(դ) Սովորքների մշակում ճանապարհների հետախուզության կազմակերպման և անցկացման մեջ:

9–զ(ե) Սովորքների մշակում կրտսեր հրամատարի մեջ գետի հետախուզության կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

9–ը(ժ) Սովորքների մշակումը անտառի հետախուզության կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

9–թ(զ) Սովորքների մշակում ագարակի ու գյուղի հետախուզության կազմակերպման և անցկացման վերաբերյալ

9–ե (դ), զ (ե) ը (ժ) և թ (զ) վարժությունները նպատակ ունեն սովորեցնելու կրտսեր ջոկի կորիզի ու դիտակալների շարժումը հետախուզական որյեկտների անմիջական մոտիկությամբ, ձեռք առնելով նախազգուշական միջոցներ դարանի դեմ, և հավաքելով անհրաժեշտ տեղեկությունները տվյալ որյեկտը բնութագրող բոլոր հարցերի վերաբերյալ, ձեռք առնելով անվտանգության այն բոլոր միջոց-

ները, վոր անհրաժեշտ են այդ աշխատանքի կատարման համար:

Տեղեկությունների հավաքման աշխատանքները կարող են սկզբում կատարվել մինիատյուր-պոլիգոնում, իսկ կորիզի ու դիտակների աշխատանքի տեխնիկայի մշակման համար պարապմունքները փոխադրվում են դաշտ, ներգրավելով ջոկի կարմիր բանակայիններին:

9ժ(ի). Սովորողների մշակում ջոկի հրամատարի մեջ հակառակորդի գրված կետերի հետախուզության կազմակերպման ու գերիներ բռնելու վերաբերյալ

Վարժության նպատակն է՝ պրակտիկա տալ ջոկի հրամատարին տեղանքը գնահատելու մեջ՝ հայտնաբերելու համար այն տեղերը, վորտեղ ամենից հավանաբար գտնվում են հակառակորդի պահպանության պոստերը. պրակտիկա տալ ջոկի հրամատարին և ամբողջ ջոկին՝ կազմակերպելու համար ջոկի շարժումը, յերբ նախատեսվում է ընդհարում հակառակորդի հետ, պրակտիկա տալ անաղմուկ կերպով բռնելու հայտաբերված հակառակորդին և արագ յետ քաշվել՝ տանելով գերիներին:

Վարժությունն անց է կացվում կարտուկ տեղանքում, վորը տալիս է լավ մատույցներ և անցնում է հետևյալ կարգով: Ղեկավարը պարապմունքների համար նշված տեղամասում կարգում է պահպանության մի շարք պոստեր (յերկուսից վոչ պակաս), վորոնք միմյանցից գտնվում են 400–500 մետր հեռու այնպես, վոր նրանց արանքները զննվում են դետքերի կողմից: Հետախուզական ջոկի հրամատարին մի ինչ-որ խնդիր է տրվում դետքի զեկուցագրի ձևով (կարելի յե ցույց տալ դետքը յերկու պոստերի մեջտեղում) և հետախուզական դասակի հրամատարին խնդիր է առաջադրվում՝ թաղնված ներխուժել այդ ուղղությամբ, վորոշել, թե կա՞ արդյոք այնտեղ հակառակորդի պոստը, գերի բռնել նրան: Հետախուզական դասակի կորիզը դասավորվում է այնպիսի նպատակով, վոր հարկ յեղած դեպքում պաշտպանի հետախուզական ջոկի նահանջը:

Լուծում. Հետախուզական ջոկն առաջ է շարժվել թփուտով դեպի առաջ 2 դիտակալի պաշտպանության տակ: Հասնելով այն կետին, վորտեղ նշված եր հակառակորդի դետքը, դիտակալներն ազդանշան տվեցին, վոր նորից հայտնաբերված է հակառակորդի դետք: Դետքը, մի կողմով անցնելով, ուղևորվում է դեպի պոստը: Հետախուզական ջոկը թիկունքից ծածուկ մոտենում է պոստին և գերի յե վերցնում նրան:

Այնուհետև տեղի յե ունենում վերլուծում, վորին ներգրվում են սովորողները:

9-ի (կ) Սովորքների մշակում հետախուզական ջոկի հրամատարի մեջ՝ ջոկը գիշերով հետախուզության ժամանակ ղեկավարելու վերաբերյալ

Վարժության նպատակն է՝ հետախուզական ջոկի հրամատարի մեջ հմտություն մշակել՝ ղեկավարելու ջոկի ու դիտակալների շարժումը նշանների ողնությամբ, նշել այն ուղին, որով կարելի լինի ամենից պակաս աղմուկով ժամանակին հայտաբերել հակառակորդին և գերի բռնել նրան: Մասնավորապես պետք է մշակել դիտողության կազմակերպման հարցը լույսի կարճատև բռնկումների ժամանակ (կայծակ, հրթիռ, լուսարձակի ճառագայթ) այնպես, որ յուրաքանչյուր կարմիր բանակային ստանա դիտողության ուղղություն կամ որոշ օբյեկտ:

Գիշերով հետախուզության մեջ ղեկավարումը կազմակերպելու սովորքների յուրացման ստուգման համար լավ վարժություն է հանդիսանում հետևյալը. յերկու ջոկ դասավորվում են միմյանցից 200 մետրից մինչև 3 կիլոմետր հեռավորության վրա. չգիտենալով, թե ինչպիսի տարածության վրա կարելի յե հանդիպել հակառակորդին, ջոկերը խնդիր են ստանում, շարժվելով հակառակորդի դեմ վոչ պակաս քան մի ժամում 2 կիլոմետր տեմպով, հայտաբերել թշնամու հետախուզությունը և գերի վերցնել նրան:

Գնահատականը.— «Գերազանց»— Բարձրացնել շարժման տեմպերը մի ժամում 3 կիլոմետրից ավելի. առաջին ջոկին հայտաբերել հակառակորդի հայտնվելը, ցույց չտալով իր ներկայությունը, անց կացնել նրան իր մոտից և թիկունք անցնելով հնչունական ազդանշանով նշել հարձակումը (արդեվվում է կրակել):

«Լավ».— Տալ շարժման տեմպեր վոչ պակաս, քան 2 կիլոմետր, առաջին ջոկին նկատել հակառակորդին և գերել թեկուզ մի դիտակալ:

«Բավարար».— Տալ շարժման տեմպերը վոչ պակաս, քան 2 կիլոմետր, հայտաբերել թշնամուն և գերի բռնել, թեկուզ և հայտաբերելով իրեն:

9-ղ (լ) Սովորքների մշակում վարակված տեղամասի քիմհետախուզության կազմակերպման մեջ

Վարժությունը նպատակ ունի սովորեցնել կրտսեր հրամատարին կազմակերպել վարակված տեղամասի քիմհետախուզությունը, գնահատել, թե վորտեղ տեղանքի բնույթով հնարավոր է վարակված տեղամասերի հանդիպում, սահմանել վարակված տեղամասերի հանդիպման դեպքի համար նշաններ ու ազդանշաններ, ցույց տալ դիտակալների գործողությունների կարգը և այլն. լուծել վերոհիշյալ խնդիրները այն դեպքում, յերբ ջոկին քիմիական դեպք է տրված: Վարժությունն անց է կացվում կրտսեր հրամկազմի հետ սկզբում՝

դասարանում՝ ավազով արկղի վրա և ապա՝ դաշտում, վորտեղ կրտսեր հրամկազմը կատարում է Կարմիր բանակայինների պարտականությունները: Հետագայում նույն այդ վարժությունը մշակվում է Կարմիր բանակայինների հետ:

9-ի (մ). Սովորբների մշակում կրտսեր հրամատարների մեջ՝ հավաքած տեղեկություններն ընդհանրացնելու և այդ զեկուցագրի ձևով շարադրելու վերաբերյալ

Վարժության նպատակն է՝ մարդել հետախուզական ջոկերի հրամատարներին՝ 4–5 պարզ միջանկյալ խնդրով ստացած տեղեկությունները մի զեկուցագրով համառոտ ձևով շարադրելու հմտության մեջ:

Պարապմունքները կարող են անցկացվել մինիատյուր-պոլիգոնում այնպես, վոր միջանկյալ խնդիրները տրվեն հակառակորդ նշող թիրախներ ցույց տալու միջոցով:

Պարապմունքի համար անպայման պետք է ունենալ ժամացույց:

ԽՆԴԻՐ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՀԱՆԳԻՍՏՆ ՈՒՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խնդիրը մշակելուց առաջ ջոկի հրամատարը պետք է կրկնի ԿՄԾ 70–85-րդ հոդվածները և հետևակի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 870–872-րդ հոդվածները:

ԳՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը.— 1) Ստուգել ջոկի հրամատարին, թե ինչ չափով է նա կարողանում.

ա) գնահատել տեղանքը՝ դիտապոստի ու դաշտային պահակի կրակային դիրքի համար լավագույն տեղ ընտրելու նպատակով.

բ) կազմել հրաձգային քարտ և դաշտային պահակի դասավորության սխեման.

գ) կազմակերպել պաշտպանություն տանկերի դեմ.

դ) պարզորոշ խնդիր առաջադրել դիտապոստին.

ե) ոգտագործել ազդանշանները՝ ուղեկալին զգուշացնելու համար հակառակորդի ավիացիայի ու տանկերի հայտնվելու մասին.

զ) գիշերվա տեղ ընտրել դիտապոստի ու դաշտային պահակի համար.

է կազմակերպել հակառակորդի հետախույզներին գերի վերցնելը.

ը) գնահատել ջոկի կրակը հակառակորդի խոշոր ուժերի հարձակման ժամանակ և կազմակերպել ջոկի պլանաչափի յետ քաշվելը՝ առանց խանգարելու դասակի կրակ վարելուն.

թ) գործնականում կատարել ավագ բնակարանապետի դեր:

2) Ստուգել ջոկի հրամատարին, թե ինչ չափով նա գիտե ԿՄԾ 70–85-րդ հոդվածները և հետևակի մարտական կանոնադրքի 2-րդ մասի 870–872-րդ հոդվածները:

Անցկացման կարգը: Պարապմունքն անց է կացվում պահպանության ու հետախուզության յերկկողմ վարժության ձևով:

Տեղական բնակիչները, փախստականները ու Հակառակորդի հետախույզներ պատկերացնող անձանց գործողությունները կանոնավորում է ղեկավարը: Հակառակորդի խոշոր ուժերի հարձակումը նշվում է դրոշակով՝ հատ-հատ մարդկանցով:

Ջոկի հրամատարի աշխատանքի գնահատականը.—

«Գերազանց», յերբ ջոկի հրամատարը վստահորեն կատարել է քննական վարժության բոլոր պահանջները, սառնալով վոչ ավելի, քան 2 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 2 տուգանային աշկո:

«Լավ».— Նույնը վոչ ավելի, քան 3 ուղղում, իսկ Կարմիր՝ բանակայինները՝ վոչ ավելի, քան 3 տուգանային աշկո:

«Բավարար» Նույնը, վոչ ավելի քան 4 ուղղում, իսկ Կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 5 տուգանային աշկո:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10–ա (ա) Սովորբների մշակում ջոկի հրամատարի մեջ տեղանքը գնահատելու վերաբերյալ դաշտային պահակի (պահապան ջոկի) ոգտագործման համար

Վարժությունը մշակում է 2–ա վարժության նման, հաշվի առնելով լավ դիտողության, լավ գնդակոծի, ծածկված դասավորման և դեպի դիտապոստն ու դեպի թիկունքը ծածկված մատույցների առկայությունը:

10–բ (բ). Սովորբների մշակում հրաձգային բարտ ու դաշտային պահակի դասավորման սխեմա կազմելու մեջ

Վարժությունը նշանակվում է 2–ա վարժության համեմատ:

10–գ (վ). Սովորբների մշակում ջոկի հրամատարի մեջ հակառակորդի տանկերի հարձակումից պաշտպանության նախապատրաստության վերաբերյալ

Վարժությունը մշակվում է 2–ե (դ) վարժության մեթոդական ցուցումների համեմատ, բայց ուշադրությունը կենտրոնացնելով տեղանքի ոգտագործման ու քողարկման վրա:

10–դ (գ) Սովորբների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ ժամապահին ու նրա ոգնականին (դիտողության պոստին) խնդիրներ առաջադրելու վերաբերյալ

Վարժության նպատակն է՝ գործնականում մշակել ԿՄԾ 80–րդ հոդվածի 2–րդ կետը:

Վարժությունը վերջնականապես մշակված է համարվում, յերբ ջոկի հրամատարը, առանց ԿՄԾ դրքին նայելու, կկարողանա պարզորոշ խնդիր առաջադրել դիտողության պոստին առանց բաց թողնելու վոչ մի կետ:

10–ե (դ) Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ պոստից և ուղեկալից տրվող ազդանշանների դիտողությունը կազմակերպելու և տագնապի ազդանշաններն արագ փոխանցելու հմտության վերաբերյալ՝ ռազմական ու տանկային վտանգի դեպքում

Վարժությունը մշակվում է մինչև այուրպոլիգոնում, վերջեղ կրասեր հրամատարները, փոխելով կատարելով ջոկերի հրամատարների դեր, դիտողության պոստի դեր ու նշանացույցների դեր, ստանալով ղեկավարից մի քանի յալ խնդիրներ, վարժվում են թե՛ նշաններ տալու և թե՛ զեկուցագրեր կազմելու մեջ։

10–զ (ե) Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ գիշերով դասավորության ու դաշտային պահակի ու դիտապոստի համար տեղի ընտրության վերաբերյալ

Վարժությունը մշակվում է 2–զ (ե) վարժության համեմատ։

10–ը (ժ) Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ հակառակորդի հետախույզներին գրելու վերաբերյալ։ Առի ու անցքանի նշանակության յուրացում։

Վարժությունը մշակվում է ամեն տեսակ տեղանքում հետախուզության ու պահպանության յերկկողմ պարապմունքի ձևով։

Նրանից հետո, յերբ դաշտային պահակը

կդրավի իր տեղը, ղեկավարը կազմակերպում է հակառակորդի հետախուզական ջոկի շարժումն այնպես, որ մեկ կամ 2 հետախույզ շարժվեն կորիդից մոտ 20 մետր առջևից։ Հետախուզության շարժման տեմպը չպետք է մի բոպեյում 100 քայլից պակաս լինի։ Վարժության նպատակը հետևյալն է.

Դաշտային պահակի համար— *Բռնել հակառակորդի հետախույզին, առանց հայտարերելու իրեն («գերազանց»), կամ բռնել նրան, թեկուզ և հայտարերելով իրեն, բայց պահելով իր կողմում կրակային գերակշռությունը՝ հակառակորդի հետախուզության հետ հետագա ընդհարումների դեպքում։*

Հետախուզության համար— *Ժամանակին հայտարերել դաշտային պահակին և թույլ չտալ, որ գերի բռնեն հետախույզին։*

Փոխելով դերերը, յերկու ջոկեր, լուծելով խնդիրը բազմապիսի տեղանքում, աշխատում են մինչև որ հաստատապես կամրացվեն աշխատանքի սովորքները դաշտային պահակում։

Ցերեկով աշխատանքը յուրացնելուց հետո վարժությունը կրկնվում է գիշերով, կամ ցերեկով, բայց գործադրելով մթնացնող ակնոցներ։

10–բ (զ) ՍովորբՓՆերի մշակում ջոկի հրամատարի մեջ՝ ղեկավարելու ջոկի կրակն ու շարժումը հակառակորդի խոշոր ուժերի հարձակման ժամանակ

Վարժությունը սկզբում մշակվում է մինիատյուր–պոլիգոնում, վորտեղ հակառակորդը նշվում է թիրախային պարագայով:

Մեկ կամ մի քանի սովորող ոգնում են ջոկի հրամատարին, կատարելով շարժման վերաբերյալ նրա հրամանները՝ փոփոխելով ջոկը պատկերացնող փոքրիկ կերպարանները, համաձայն ջոկի հրամատարի տված հրամանների:

Հատուկ ուշադրություն է նվիրվում յետքաշվելու ճանապարհի ընտրության հմտությանը այնպես, վոր այդ ճանապարհը լավագույն ձևով ծածկված լինի հակառակորդի կրակից և ջոկը չխանգարի ուղեկալին կրակ վարել հակառակորդի դեմ:

10–ժ (ի) ՍովորբՓՆերի մշակում ջոկի հրամատարի մեջ՝ ավագ բնակարանորդի պարտականությունների կատարման վերաբերյալ

Վարժությունը մշակվում է բնակավայրում խմբակային պարապմունքի միջոցով, վորտեղ ջոկի հրամատարներից յուրաքանչյուրը, խնդիր ստանալով դումարտակի տեղավորման մասին, լուծում է այդ խնդիրը վոչ ավելի, քան $^1/_2$ ժամվա ընթացքում: Լսելով բոլոր «բնակարանորդների» զեկուցումները

ղեկավարը հենց տեղն ու տեղը վերլուծում է դումարտակի տեղավորման պլանները, նշելով սխալներն ու նվաճումները:

ԽՆԴԻՐ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Նախ քան խնդրի մշակումը կրկնվում են ԿՄԾ 36–53–րդ հոդվածները և հետևակի մարտական կանոնադրքի 2–րդ մասի 92, 93, 693, 694–րդ հոդվածները:

ՓՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը.— 1) Ստուգել, թե ջոկի հրամատարը ինչ չափով է կարողանում.

ա) գնահատել տեղանքը՝ հետապնդման խնդիրը լավագույն ձևով լուծելու համար.

բ) հաղթահարել թշն հետապնդման ժամանակ.

գ) կազմակերպել և իրականացնել կրակի և շարժման ղեկավարությունը հետապնդման ժամանակ.

դ) հետապնդել անտառում:

2) Ստուգել թե ջոկի հրամատարն ինչ չափով գիտի «Հետևակի մարտական կանոնադրքի» 2–րդ մասի 92, 93–րդ հոդվածները և ԿՄԾ 37, 42, 50, 5–րդ հոդվածները:

Կատարման կարգը: Վարժությունը մշակվում է դաշտում, ջոկի միակողմ պարապմուն-

քի ձևով՝ տեղանքում 2–3 կիլոմ. տարածության վրա հետապնդման թափով: Հակառակորդը նշվում է անհատ մարդկանցով դրոշակներով, իսկ կրակը սեմաֆորով, վոր ղեկավարվում է ջոկին կից գտնվող ղեկավարի կողմից:

Հետապնդման ընթացքում միջանկյալ խնդիրների հետ միասին ջոկի հրամատարին և ամբողջ ջոկին պրակտիկա յե տրվում յուրացնելու համար քննական վարժության բոլոր պահանջները: Առանձնապես ուշք պետք է դարձնել կրակի ու շարժման ղեկավարության վրա, հաշվի առնելով հակառակորդի կրակն ու նրա գործողությունները:

Գնահատականը.— «Գերազանց»— յերբ ջոկի հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, ստանալով վոչ ավելի, քան 1 ուղղում.

«Լավ».—Նույնը, վոչ ավելի, քան 2 ուղղում.

«Բավարար».— Նույնը, վոչ ավելի, քան 3 ուղղում:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11–ա (ա): Մշակել ունակություններ ջոկի հրամատարի մեջ տեղանքը գնահատվելու համար, նպատակ ունենալով գուշակելու, թե վորտեղ է ամենից ավելի հավանական հանդիպել նահանջող հակառակորդի կրակային դի-

մադրության, և նշել շարժման այնպիսի ճանապարհ, վորն ամենից ավելի ծածկված է հակառակորդի կրակից և ամենից ավելի վտանգավորն է վերջինիս համար:

Վարժությունը մշակվում է մինիատյուրպոլիգոնում և տեղանքում, վորտեղ ղեկավարը, սովորողների խմբակի հետ միատեղ շարժվելով, հարկադրում է նրանց լուծել խնդիրը ջոկի հրամատարի փոխարեն, վորը հետապնդում է կազմակերպել, իսկ ինքը, հակառակորդի փոխարեն միջանկյալ խնդիրներ տալով, ավելի կոնկրետացնում է տեղանքի գնահատման սխալը:

11–բ (բ): Մշակել ունակություններ ջոկի հրամատարի մեջ հետապնդումն իրականացնելու համար նահանջող հակառակորդի կողմից թունավոր նյութեր (թն) կիրառելու պայմաններում:

Նահանջող հակառակորդը չի կարող վարակել ամբողջ հրապարակը, սակայն միանգամայն նրա ուժերին համապատասխան կլինի ծածկել նահանջը թն յերկար ու նեղ շերտերով կամ վարակել ճանապարհները և ամեն տեսակ կիրճերը:

Վարժության նպատակն է՝ նախ և առաջ սովորեցնել ջոկի հրամատարին, թե ինչպես պետք է վորոշել այն տեղը, վորտեղ ամենից ավելի հավանական են հակառակորդի կողմից կիրառվող խափանումները թն–ով, վորի նպա-

տակն է ընտրել այդ խափանումները շրջանցելու ճանապարհներ: Երկրորդ նպատակն է՝ սովորեցնել ջոկի հրամատարին հաղթահարելու խափանման նեղ շերտերը, վորոնց հնարավոր չէ շրջանցել:

Վարժությունը մշակվում է մինիատյուր-պոլիգոնում կամ խմբակով դաշտ դուրս գալով: Ղեկավարը, նախորոք լուծելով նահանջողի խնդիրը և ունենալով խափանումների սխեման, հարկադրում է լուծել հետապնդման խնդիրը, տալով միջանկյալ խնդիրներ հայտարերած թն վերաբերյալ, վորը ճշտորեն համապատասխանում է իր սխեմային:

Առաջ շարժվելով հետապնդման ճանապարհով խմբակի հետ, ղեկավարը, կանգ առնելով դիտակետերում, ներդրավում է բոլորին խնդիրը լուծելուն, ընտրելու համար շարժման հետագա ճանապարհը: Վերլուծում կատարելով, և ցույց տալով, թե վորտեղ եյին թն նշված, ղեկավարը, առաջ շարժվելով, լրացնում է վերլուծումը առանձին հրամատարների սխալների դնահատականով:

Պարապմունքի հետաքրքրությունը պետք է բարձրացնել մասնակցողների միջև մրցակցությամբ թե ով կգտնի քիմիական խցանների և շրջանցումների ավելի շատ տեղեր:

Վարժության ընթացքում, մի շարք խնդիրների միջոցով սովորողները գործնականում յուրացնում են նաև ԿՄԾ 50-րդ հոդվածը:

11-գ (վ): Մշակել ունակություններ ջոկի հրամատարի մեջ հակառակորդին հետապնդելու համար, վորը գործադրել է ամեն տեսակ խափանում:

Վարժությունը մշակվում է մոտավորապես 11 (բ) (բ) վարժության նման:

11-դ (գ): Մշակել ունակություններ ջոկի հրամատարի մեջ հետապնդումը կազմակերպելու համար անտառում և գիշերը:

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ջոկի հրամատարին թե ինչպես պետք է կողմնացույցով նշել իր համար առանց ճանապարհների շարժման ուղղությունը, դուրս գալու համար դեպի այն կետերը, վորոնք հատկապես վտանգավոր են նահանջողի համար, և կարողանալ դուրս գալ այդ կետերի մոտ:

Վարժությունը մշակվում է խմբակային պարապմունք անցկացնելով անտառում կամ գիշերը սակավ ծանոթ տեղանքում:

Ղեկավարը, տեղանքում պայմաններ ստեղծելով, հարկադրում է հակառակորդի նահանջի ճանապարհները բռնելու վճիռ ընդունել, կողմորոշվելու համար ոգտվելով քարտեզից և կողմնացույցից:

Դրան զուգընթաց ջոկի հրամատարին պրակտիկա յե տրվում դարանները և կրակային հարձակումները հայտարերելու և նրանց դեմ կռվելու խնդիրներ առաջադրելու մեջ:

կատարման գնահատականը, մոտավորապես քննական վարժության նման:

11–ե (դ): Մշակել ունակություններ ջոկի հրամատարի մեջ՝ հակառակորդին անընդհատ հետապնդելու համար:

Վարժությունը մշակվում է մինիատյուրպոլիգոնում և տեղանքում, հրամատարական խմբակային պարապմունքում, մի շարք թռուցիկ խնդիրներ լուծելու միջոցով, հետապնդման խնդրի լուծման ֆոնի վրա:

ԽՆԴԻՐ ՏԱՍՆՅԵՐԿՈՒԵՐՈՐԴ

Մարտից դուրս գալը

Նախ քան խնդրի մշակումը կրկնվում են կանոնադրքերի այն հոդվածները, որ մատնանշված են ջոկի 3–րդ խնդրում:

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Նպատակը.— 1) Ստուգել, թե ջոկի հրամատարն ինչ չափով է կարողանում.

ա) գնահատել տեղանքը՝ նշելու համար յետ քաշվելու ամենից շահավետ ուղիները և կրակային դիրքերի տեղերը.

բ) կազմակերպել ջոկի ծածկված արագ յետ քաշվելը.

գ) խնդիրներ առաջադրել սնայպերներին պաշտպանության մեջ ու յետ քաշվելիս.

դ) կազմակերպել կրակի ու շարժման հերթափոխումը՝ հակառակորդի կողմից ճնշման ժամանակ.

ե) ոգտագործելով ծուխը՝ ծածկելու համար յետ քաշվելը հակառակորդի ճնշման ժամանակ, յերբ բացակայում են յետ քաշվելու ծածկված ճանապարհներ.

զ) կռվել հեծելազորի ու տանկերի հարձակման դեմ.

է) կազմակերպել պաշտպանություն ավիաքիմհարձակման դեմ:

2) Ստուգել, թե ջոկի հրամատարն ինչ չափով դիտե հետևակի մարտական կանոնադրքի 2–րդ մասի 114–117, 162–169 հոդվածները և «հակաքիմիական պաշտպանության հրահանգի» անհրաժեշտ հոդվածները:

Անցկացման կարգը: Վարժությունն անց է կացվում դաշտում հրաձիգ ջոկի միակողմ վարժության ձևով:

Հակառակորդի կրակը նշվում է հակառակորդի կողմից սեմաֆորով: Հակառակորդի հարձակումը նշվում է կա՛մ ղեկավարի միջանկյալ խնդիրներով կա՛մ դրոշակներով:

Կարելի յե վարժությունն անցկացնել նաև յերկկողմ պարապմունքի ձևով, վորտեղ հակառակորդը նշվում է այլ ջոկերով, վորոնք լուծում են հետապնդման կամ մարտ մղելով հետախուզության խնդիր:

Կրակն այս դեպքում նշվում է սեմաֆորներով:

Գնահատականը. «Գերազանց», յերբ ջոկի հրամատարը վստահորեն կատարում է քննական վարժության բոլոր պահանջները, իսկ կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 2 տուգանային աշկո:

«Լավ», յերբ ջոկի հրամատարը վստահորեն կատարում է վարժության պահանջները, ստանալով վոչ ավելի, քան 2 ուղղում, իսկ կարմիր բանակայինները ստանում են վոչ ավելի, քան 4 տուգանային աշկո (հոդվ. 26-րդ):

«Բավարար», յերբ ջոկի հրամատարը ստանում է վոչ ավելի քան 3 ուղղում, իսկ կարմիր բանակայինները՝ վոչ ավելի, քան 5 տուգանային աշկո:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12-ա (ա) Սովորբների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ գնահատելու համար տեղանքը թիկունքային այնպիսի բնագծերի ընտրության տեսակետից, վորտեղից հնարավոր է կրակ վարել, ինչպես նաև դեպի այդ բնագծերը յետ քաշվելու ծածկված ուղիների ընտրության համար

Վարժությունը մշակվում է սկզբում միանիատյուր-պոլիգոնում խմբակային պարապմունքի ժամանակ, վորտեղ յուրաքանչյուր ջոկի հրամատարին հնարավորություն է տրվում մի քանի թռուցիկ խնդիրներ լուծելու տեղանքի գնահատման, բնագծերի ընտրության վերաբերյալ, վորոնց ջոկի հրամատարը, հաջորդաբար գրավելով, կկարողանա կրակ բանալ և կասեցնել թշնամուն, յետ քաշվելու ճանապարհների ընտրության վերաբերյալ, վորոնք ծածկված են տեսածրից ու գնդակոծից այնպիսի կետերից, վորոնք ղեկավարի ցուցումների համաձայն գրավված են հակառակորդի կողմից:

Այս վարժության շարունակությունը կիանդիսանա ջոկի հրամատարների խմբակի դաշտ դուրս գալը

Այս պարապմունքը հարմար է կազմակերպել՝ մարտական պահպանության կազմի մեջ մտնող ջոկի համար խնդիրներ լուծելու ձևով: Ղեկավարը, ցուցումներ տալով այն մասին, թե վորտեղից է սպասվում հակառակորդը, վորտեղ են հարևանները, ուր յետ քաշվել հակառակորդի ճնշման տակ, պահանջում է յուրաքանչյուր հրամատարից լուծել՝ պաշտպանության մեջ ջոկի դասավորման խնդիր և նշել յետ քաշվելու ուղին, շնչառումների տեղերն ու բնագծերը, վորտեղ կարելի յե կանգ առնել:

Տալով 5-10 րոպե վճիռ ընդունելու համար, ղեկավարն առաջնորդում է խմբակին այն ճանապարհով, վոր նշել է ջոկի հրամատարներից մեկը և միաժամանակ վերլուծում է կատարում, ուշադրություն դարձնելով ընդունած վճռի դրական ու բացասական կողմերի վրա:

Ձեռք բերված սովորքներն ամրացվում են, կրկին լուծելով նույնպիսի թռուցիկ խնդիր, բայց այլ ուղղությամբ և այլ պարագայում:

12–բ (բ). Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ ջոկի ղեկավարման համար, յերբ ամբողջ ջոկը յետ է քաշվում հակառակորդի կրակի տակ և հակառակորդի կողմից թն գործադրության պայմաններում

Վարժությունն անց է կացվում սկզբում մինիատյուր–պոլիգոնում, վորտեղ հակառակորդը նշվում է հայտնվող փոքրիկ թիրախների խմբակներով, կրակը նշվում է սեմաֆորով, իսկ ջոկի հրամատարի դերը հերթով կատարում են սովորողները: Փոփոխելով ջոկերի տեղերը, նրանց յետ քաշվելու ճանապարհների ուղղությունները, միջանկյալ խնդիրներ տալով թիրախների բարձրացումով ու սեմաֆորով, ղեկավարը յուրաքանչյուր սովորողին պրակտիկա յե տալիս մի քանի խնդիրների լուծման մեջ, մարզելով նրանց վճիռներ ընդունելու, կրակի ու շարժման հրամաններ տալու մեջ:

Նույն այդ վարժությունը կրկնվում է դաշտում, վորտեղ հակառակորդը կարող է նշվել ղեկավարի միջանկյալ խնդիրներով, իսկ կրակի լարվածության աստիճանը՝ սեմաֆորով: Ջոկը պատկերացվում է սովորողների խմբակով, իսկ ջոկի հրամատարի դերը կատարում է հերթով սովորողներից մեկը:

Ուսուցման ընթացքում ղեկավարը հատուկ ուշադրություն է դարձնում նրա վրա, վոր սովորողները կարողանան ուղղումներ մտցնել յետ քաշվելու համար նշված ճանապարհի մեջ՝ նայած պարագայի փոփոխման:

Ճիշտ են այն հրամատարի գործողությունները, վորը, համառորեն ձգտելով պահել իրեն ցույց տված յետ քաշվելու ուղղությունը, միևնույն ժամանակ կկարողանա ոգտագործել յուրաքանչյուր ձորակ ճշտելու համար շարժման ուղիները՝ հակառակորդի կրակից ծածկվելու նպատակով:

Վարժությունը կրկնվում է քիմհարձակման պարագայում:

12–գ (վ) Սովորքներ մտակվում ջոկի հրամատարի մեջ՝ յետ քաշվելու ժամանակ կրակի ու շարժման զուգակցման վերաբերյալ

Վարժությունը նախ մշակվում է մինիատյուր–պոլիգոնում 12–բ (բ) վարժության նման: Ջոկի համար ստեղծվում է այնպիսի պարագա, վորով հակառակորդը, ճնշելով ջոկին, թույլ չի տալիս, վոր ջոկը յետ քաշվի առանց կրակի ոգնության: Հարևաններն ոգնել չեն կարող: Ջոկի հրամատարը կարող է վճիռ ընդունել յետ քաշվել վտավաններով (պերեկատ), հերթափոխելով ձեռքի գնդացրի և հրաձիգների կրակն ու շարժումը, կամ պաշտպանվելով ձեռքի գնդացրի ու սնայպերի կրակով, հերթափոխելով նրանց կրակն ու շարժումը:

1843—V

Այս վարժության ժամանակ առանձնապես խիստ կերպով հայտարերվում է տեղանքի արագ գնահատման ունակության նշանակությունը, նպատակ ունենալով նշել և՛ յետ քաշվելու ծածկված ուղին և՛ կրակի համար նոր դիրքը:

Տեղանքի գնահատման և կրակի ու շարժման դեկավարման վերաբերյալ հրամաններ տալու սովորքներ ձեռք բերելուց հետո՝ դեկավարը խմբակին դաշտ է դուրս բերում և իսկական տեղանքում ամրացնում է ձեռք բերած սովորքները նշելով հակառակորդին թիրախներով կամ դրոշակներ ունեցող առանձին մարդկանցով, վորոնք նշում են ամբողջ ստորաբաժանումները: Հակառակորդի կրակը նշվում է սեմաֆորով. սեմաֆորը, դրված լինելով խափանման վրա, կասեցնի յետ քաշվող ջոկին պատասխան կրակ վարել:

12–դ. (գ) Սովորքի մշակում ծխի ոգտագործման մեջ՝ ջոկի յետ քաշվելը ծածկելու համար

Վարժության նպատակն է՝ սովորեցնել ոգտագործել ծխագլանները ծածկույթ ստեղծելու համար, հաշվի առնելով քամու ուղղությունը:

Վարժությունն անց է կացվում դաշտում, կոնկրետ պարագայում: Սկզբի համար տրվում է խնդիր այնպիսի հաշվով, վոր յետ քաշվելու ճանապարհը լինի քամու ուղղությանն ուղղահայաց: Ծխագլանը վարժություններում կարող է փոխարինվել թաց խոտի կամ ճյուղերի խարույկով:

12–ե (դ). Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ ընտրելու համար յետ քաշվելու այնպիսի ճանապարհ, վորն ամենից լավ է պաշտպանված տանկերի հարձակումից, ինչպես նաև կռվելու համար տանկերի դեմ, յերբ նրանք հարձակվում են տանկերի յետ քաշվելու ժամանակ (ԿՄԾ 15 և 34–րդ հոդվածներ):

Վարժությունը սկզբում հարկավոր է մշակել մինիատյուր–պոլիգոնում, բազմապիսի տեղանքում և ապա ամրացնել իսկական տեղանքում խմբակային պարապմունքի ձևով, վորտեղ տանկերը պատկերացվում են արագրնթաց մակետով (թեկուզ և ձիավորով տանկային պայմանական նշանով):

12–զ (ե). Սովորքների մշակում ջոկի հրամատարի մեջ՝ կռվելու համար ջոկի յետ քաշվելու ժամանակ հեծելազորի հանկարծակի հարձակման դեմ (ԿՄԾ հոդված 15):

Վարժությունը մշակվում է նույնպես, ինչպես 12–ե (դ) վարժությունը:

ՀԱՅԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏ. ՊՈՂ. ԵՐԵՎԱՆ
ՀԱՅ. ՍՍՀ
ՀՍՍՀ Գ. Մասիսյանի անվ. Գրադարան

«Ազգային գրադարան»
NL0218759

42.404

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

Методика тактической
подготовки пехоты

глава II

Подготовки отделения
и его командира

Госиздат ССР Армении, Эривань, 1933